25 ՆՈՅԵՄԲԵՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 217 (4597)

Ազգ Azg

ISSN: 1829-1651

# Մոնթեի ծննդյան օրը

Այսօր Արցախյան ազատամարտի խորհրդանիշներից մեկի՝ Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան օրն է: Զոհված հրամանատարին կհիշեն նրա զինվորները, Արցախի ազատագրման համար ընկած հերոսին գնահատող ամեն հայ մարդ՝ Եռաբլուր, նրա շիրմին այցելությամբ: Եռաբլուրի կամարների մոտից ժամը 16-ին կսկսվի «Հայազն երիտասարդական միաբանության» ուխտագնացությունը Մոնթեի գերեզման:



# Խաղ՝ «Պարտվեցինք-հաղթեցինք»

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Անցած շաբաթավերջին, Ազգային ժողովի խմբակցությունների ներկայացուցիչներին հարցնելով Աստանայում դեկտեմբերի 1-2-ին կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովից ղարաբաղյան հիմնախնդրի հետ կապված ակնկալիքների մասին, պարզեցինք, որ նրանք համարյա բոլորն էլ որեւէ նոր բանի այստեղ չեն սպասում: Նախ՝ իրավիճակը լարված է, իսկ որեւէ փաստաթղթի ստորագրումը կարող է առավել սրել այն (Ա. Շահբազյան, ՀՅԴ), երկրորդ՝ սովորական բանակցային հերթական փուլ է պարզապես Աստանան, եւ նրանից սենսացիա նախօրոք սպասել չարժե (Գ. Սահակյան, ՀՀԿ), բացի այդ՝ այժմ որեւէ փաստաթղթի մասին նախնական որեւէ խոսք չի գնում (Ա. Սաֆարյան, ԲՀԿ), մանավանդ՝ ներկա զարգացումներն ու հռետորաբանությունն այդ թույլ չեն տա (Ս. Սաֆարյան, «Ժառանգություն»): Սակայն մամուլում եւ մամուլի ասուլիսներում չի դադարում հարայհրոցը, թե Աստանայում մեզ համար վատ փաստաթուղթ է ստորագրվելու: Երբեմն վերլուծությունների կառուցումը զարմանալի պարզունակ սխեմա ունի՝ երբեք քայլ իսկ հեռու չդնելով մտածողության այն կարծրատիպից, թե այս կամ այն երեւույթը կամ պարագան մատնանշում է հայ դիվանագիտության հաղթանակ կամ պարտություն: Լիսաբոն չգնացինք՝ պարտվել ենք: ՆԱՏՕ-ի հռչակագիրը պարտություն է, քանի որ այնտեղ տարածքային ամբողջականության մասին է միայն նշված, չգնալն էր հաղթանակ եւ այլն:



Տես էջ 8

ՉԿԱՅԱՑԱԾ ԱՅՑ

# Վրաց պատրիարքարանը վախենո՞ւմ է հայոց կաթողիկոսի Ջավախք այցելությունից

**Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի այցելությունը Վրաստան, ամենայն հավանականությամբ, այլեւս չի կայանա: Եվ այդ հավանականության մեծացման հիմնական պատճառը, այդուհանդերձ, կաթողիկոսի՝ Ջավախք այցելելու ցանկությունն է:**

**Նոյեմբերի երկրորդ կեսին Ամենայն հայոց կաթողիկոսի Վրաստան կատարելիք հովվապետական այցի առնչությամբ Մայր աթոռից վերջերս տեղեկացրին, որ այցը հետաձգվում է: «Նկատի առնելով Վրաստանի պատրիարք Իլյա Երկրորդի՝ արտասահմանում բուժումից հետո վերականգնողական շրջանի անհրաժեշտությունը եւ պատրիարքի ցանկությունը՝ ուղեկցելու հայոց կաթողիկոսին Թբիլիսի եւ Ջավախք միջեկեղեցական եւ հովվապետական այցելության ողջ ընթացքում՝ Վրաց եկեղեցին դիմել է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին՝ վերանայելու հայոց հայրապետի Վրաստան այցի թվականը», նշված էր Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովի մասին ներկայացնող հաղորդագրության մեջ:**

**Ըստ այդմ, Գերագույն հոգեւոր խորհուրդը նոյեմբերի 13-14-ին Էջմիածնում, կաթողիկոսի նախագահությամբ, «ընդառաջ խնդրանքին հետաձգել է Վեհափառի Վրաստան այցը՝ նկատի ունենալով հետաձգման վերաբերյալ նաեւ Վիրահայոց թեմի եւ Ջավախքի փոխառաջնորդության խնդրանքը»:**

**Ըստ էության, քանիցս հայոց կաթողիկոսի այցելությունը հետաձգելու տարբեր պատճառները գնալով պակաս հիմնավոր են դառնում: Ի վերջո, եթե վատառողջ է վրաց պատրիարքը, հայոց կաթողիկոսը կարող էր նաեւ մենակ այցելել Ջավախք՝ առանց ուղեկցության:**

**Ինչեւէ, Վրաստանի պատրիարք Իլյա Երկրորդը, որ բուժումից հետո, ասացվել էր, որ չի կարող ուղեկցել հայոց կաթողիկոսին, պարզվում է, որ ամենայն հանգստությամբ կարողանում է այցեր իրականացնել: Մասնավորապես երեկ պատրիարքը այցելել է Գուրիի շրջան, որտեղ մասնակցել է հասարակական գործիչ Էկվտիմե Տակաիշվիլու տուն-թանգարանի բացմանը: Բացի այդ, նա եղել է Աչիի կիրճում գտնվող Ս. Գեորգի եկեղեցում:**

**«Ազգը» տեղեկացրել է, որ դեռեւս հունիս ամսին էր նախատեսվում Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնական այցը Վրաստանի պատրիարք Իլյա Երկրորդին, որից հետո Նորին Սրբությունը հովվապետական այցով պիտի լիներ Վիրահայոց թեմում՝ Թբիլիսիում եւ Ջավախքում:**

**Ժամանակին մեր թերթը գրել էր, որ Ջավախք հովվապետական այցի հավանականությունն այնքան փոքր է, որ դրան կարելի է չհավատալ: 1894-ից ի վեր հայոց որեւէ կաթողիկոս չի այցելել Ջավախք, երբ հայկական սփյուռքի շատ երկրներում են եղել մեր կաթողիկոսները:**

**Մինչդեռ Ջավախքում վաղուց են սպասում հայոց կաթողիկոսի այցելությանը, սպասում են ոչ միայն հավատի, այլեւ ընդհանրապես հայ հոգեւոր առաջնորդի տեսնելու, օրհնություն ստանալու ակնկալիքով: Եվ սա այն դեպքում, երբ Ջավախքում դժվարությամբ են հաղթահարվում տասնյակ տարիներ առանց եկեղեցու ու հոգեւորականի ապրած ժամանակների սովորությունները, որոնց համաձայն ջավախքցին հազվադեպ է մտնում եկեղեցի:**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀՀ նախագահը Աշգաբադից հիշեցնում է սկզբունքներն ու դրանց իրավահավասարությունը

Թուրքմենստանի ղեկավարը բարձր է գնահատում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակության այցը իրենց երկիր:

Այս մասին հաղորդել է Թուրքմենստանի նախագահի մամուլի ծառայությունը: «Առաջիկա բանակցությունները բարձր մակարդակով կոչված են նոր շարժ հաղորդելու արդեն իսկ ձեւավորված միջպետական բարեկամական երկխոսությանը եւ ստեղծելու համագործակցության նոր հիմքեր: Կան ընդհանուր նպատակներ համագործակցության պոտենցիալը զարգացնելու համար», ըստ «Ռեգնում» գործակալության՝ այս մասին նշել է Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը: Ինչպես հաղորդում է գործակալությունը, Երեւանում Թուրքմենստանի դեսպանատան տվյալների համաձայն, թուրքմենա-հայկական փոխհարաբերություններում նկատելի է կայուն զարգացում բոլոր ուղղություններով: Կողմերի միջեւ կնքվել են ավելի քան 57 միջպետական, միջկառավարական եւ միջգերատեսչական համաձայնագրեր: Թուրքմենստանում այսօր հայկական կապիտալով գործում են 10 ընկերություններ: Արդեն երկու նախագահների հանդիպումից հետո՝ համատեղ ճեմազրույցում Սերժ Սարգսյանը անդրադարձել է ԼՂ հակամարտությանը. «ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորման բանակցությունները ընթանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում եւ ցանկացած այլ ձեւաչափով ու կառույցում ընդունված բանաձեւերը հակաարդյունավետ են ու կարող են խոչընդոտել բանակցությունների ընթացքին», նշել է ՀՀ նախագահը: Նախագահի խոսքով, հակամարտությունների խաղաղ լուծումը պետք է տեղի ունենա միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա՝ դրանց ամբողջականության շրջանակներում: Սերժ Սարգսյանը հիշեցրել է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի պարագայում միջնորդներն առաջ են քաշել երեք սկզբունքներ. ուժի ու դրա սպառնալիքի չկիրառում, ժողովուրդների իրավահավասարություն եւ ինքնորոշման իրավունք, տարածքային ամբողջականություն:

**Հ. Ա.**

# Ուկրաինան՝ 2013-ին ԵԱՀԿ նախագահող

ԵԱՀԿ 56 երկրների արտգործնախարարների նոյեմբերի 23-ին ընդունած որոշման համաձայն, ԵԱՀԿ նախագահությունը 2013 թվականին կստանձնի Ուկրաինան: Ըստ ԵԱՀԿ պաշտոնական հաղորդագրության, որոշումը կայացվել է կոնսենսուսով՝ փակ գործընթացով:

2010 թվականին ԵԱՀԿ-ում նախագահում է Ղազախստանը: 2011-ին կնախագահի Լիտվան, 2012-ին՝ Իռլանդիան:

Ինչպես հայտարարել է ԵԱՀԿ գործող նախագահ, Ղազախստանի արտգործնախարար Կանատ Սաուդաբաեւը, ԵԱՀԿ արտգործնախարարները Ուկրաինային ցանկանում են պատասխանատու այդ առաքելության հաջող իրականացում: «ԵԱՀԿ գագաթաժողովը Աստանայում բացառիկ կարեւորության քայլ է, եւ մենք ակնկալում ենք արդյունավետ աշխատանք բոլոր գործընկերների հետ՝ համաձայնեցնելու իսկապես պատմական որոշումների կայացումը բարձր մակարդակի այդ հանդիպմանը», ասել է Սաուդաբաեւը:

**Ա. Հ.**

# Ավելի կարեւոր հարցեր ԱՄՆ-ում

**Հ. ԱՓՅԱՆ**

**Արդեն մեկ տարուց ավելի Վաշինգտոնը Բաքվում դեսպան չունի, արդեն տեւական ժամանակ, հատկապես Օբամայի նախագահ դառնալուց հետո, հայ-ադրբեջանական հանդիպումները կազմակերպում եւ իրականացնում է Ռուսաստանը՝ միայնակ, որը նաեւ, առանց ԱՄՆ-ի հետ թեկուզ «խորհրդանշական» խորհրդակցելու, ճանաչեց Աբխազիան ու Հարավային Օսիան, իսկ անցյալ ամառ էլ ռազմաբազան ամրապնդեց Հայաստանում: Սա եթե չի փաստում, որ ԱՄՆ-ը երկրորդական պլան է ուղարկել Կովկասը, ապա գոնե ցույց է տալիս դա: Համաշխարհային տնտեսական ճգնաժամն, իհարկե, մեծ մասամբ խառնեց ինչ-ինչ ամերիկյան խաղաթղթեր, այդ թվում՝ «կովկասյան սեղանին» դրված, ու այժմ Վաշինգտոնը, թվում է, առավելապես մտահոգված է ներքին խնդիրներով, քան հարցով, թե էլ, երբ ու որտեղ հանդիպեն Սարգսյանն ու Ալիեւը, կամ «ի՞նչ նվիրենք» Սաակաշվիլուն: Այս առումով բավական հետաքրքական մեկնաբանություններով հանդես է եկել ամերիկյան «Քիսինջեր Ասսոշիեյթս» կենտրոնի ավագ տնօրեն, քաղաքագետ Թոմաս Գրեմը: «Կովկասում իրավիճակը գրեթե չի քննարկվում ԱՄՆ-ի նոր վարչակազմի կողմից», վստահեցրել է քաղաքագետը՝ հավելելով, որ իրավիճակը բերել է նրան, որ Վաշինգտոնը տարածաշրջանում թուլացրել է իր դիրքերը: «Օբամայի վարչակազմը հիմնական ուշադրությունը կենտրոնացրել է ներքաղաքական, առաջին հերթին՝ տնտեսական հարցերի վրա: Եվ պարզ է, որ մանավանդ վերջին՝ միջանկյալ ընտրություններում կրած պարտությունից հետո Օբաման ստիպված է լինելու ավելի շատ մտածել ներքին հարցերի մասին», ասել է Գրեմը:**

Տես էջ 2

ՀԻՇԵՑՈՒՄ

ԱՊՊԱ պայմանագրեր ձեռք բերելու ժամկետի ավարտին մնացել է 36 օր:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ընկերությունը կատարում է պայմանագրերի ձեւակերպում:

✔ ՀՀ, ք. Երեւան, Տպագրիչների 8
✔ ՀՀ, ք. Երեւան, Դեմիրճյան 38
✔ ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 20 հասցեներով:
▼ www. ingoarmenia.am կայքում
▼ 010-54-74-05 թեժ գծով:

Ինչպես նաեւ առաքում:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Մենք վճարում ենք: Մի՛շտ*

* համաձայն ապահովագրության պայմանագրի եւ պայմանների:

# Անչափահասների հանցագործությունների ցուցանիշը Հայաստանում ավելի ցածր է, քան Ադրբեջանում եւ Վրաստանում




2009 թվականի համեմատությամբ անչափահասների հանցագործությունների թիվն այս տարի նվազել է 21-ով: Երեկ այս մասին լրագրողներին ասաց ոստիկանության քրեական հետախուզության 3-րդ վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ **Նելլի Դուրյանը**: 2010 թվականի առաջին 10 ամիսների ընթացքում գրանցվել է անչափահասների կատարած հանցագործությունների 390 դեպք, իսկ 2009-ի նույն ժամանակահատվածում՝ 411 դեպք: Անչափահասների հանցագործությունների, խուլիգանությունների թիվը նվազել է, սակայն ավելացել են ինքնասպանություն կատարելու փորձերն ու դեպքերը: Նելլի Դուրյանը տեղեկացրեց, որ այս տարի արդեն գրանցվել է անչափահասների ինքնասպանության 38 դեպք, որից 13-ը մահվան ելքով, իսկ անցյալ տարի գրանցվել է անչափահասների ինքնասպանության 23 դեպք: Ինքնասպանության շարժառիթներն ու իրական պատճառները տարբեր են: Ինքնասպանությունների թիվն ավելացել է ամբողջ աշխարհում, այդ թվում եւ Հայաստանում, եւ ինչպես տեսնում ենք՝ անչափահասների տարիքային խմբում ինքնասպանության դեպքերը նույնպես ավելացել են: «Հենարան» ակումբում Նելլի Դուրյանը կոչ արեց զանգվածային լրատվամիջոցներին հնարավորինս հեռու մնալ դրոշմներ դնելուց. «Պետք է սպասել քննության ավարտին ու արդյունքներին՝ տեսնելու համար, թե ինչո՞ւ անչափահասն ինքնասպանություն գործեց, արդյոք նա էմո՞ էր, թե՞ ոչ»:

Անդրադառնալով թրաֆիքինգի ու մուրացկանության դեպքերին՝ Նելլի Դուրյանը տեղեկացրեց, որ այս տարվա 10 ամիսներին արձանագրվել է անչափահասների թրաֆիքինգի 2 դեպք, իսկ մուրացկանության վերաբերյալ նշեց. «Ոստիկանությունը միշտ զբաղվել է մուրացկանների հիմնախնդիրներով՝ չնայած սա սոցիալական ծագում ունեցող խնդիր է: Այլ երկրներում մուրացկանության խնդիրներով զբաղվում են սոցիալական աշխատողները, բայց մեզանում այդ ինստիտուտը տարիներ շարունակ բացակայել է»: Հետեւողական աշխատանքի շնորհիվ մուրացկանությամբ զբաղվող անչափահասների թիվը նվազել է: 10 տարի առաջ մուրացկանություն անելու համար հաշվառված էին շուրջ 300 անչափահասներ, իսկ այսօր՝ 20: Այս հարցում կանխարգելող գործողությունները շատ կարեւոր են: Տարիներ շարունակ զբաղվելով մուրացկանությամբ՝ երեխայի համար մուրացկանությունը դառնում է կենսակերպ ու աշխատանք: Անգամ չափահաս դառնալուց հետո նա շարունակում է մուրացկան մնալ:

Կրկին անդրադառնալով հանցագործություններին՝ Նելլի Դուրյանն ավելացրեց, որ վերջին տարիներին հիմնական հանցատեսակը, որը կատարում են անչափահասները, գողությունն է: Անչափահասների կատարած հանցագործությունների ցուցանիշը Հայաստանում ավելի ցածր է, քան Ադրբեջանում եւ Վրաստանում: Հայաստանում, սակայն, ավելացել են սառը զենք՝ դանակ, կտրող գործիք, կրելու դեպքերը, որոնք վերաբերում են անչափահասներին: Այստեղ բանախոսը կարեւորեց ծնողների ուշադրությունը: Վերջիններս պետք է զգոն լինեն եւ հետաքրքրվեն՝ արդյոք երեխայի իրերի մեջ կա՞ դանակ կամ որեւէ սուր, կտրող գործիք, որտեղի՞ց է դա ձեռք բերել եւ ինչո՞ւ:

Նելլի Դուրյանը նաեւ խոսեց երեխաների նկատմամբ կատարվող բռնություններից: 2009-ի համեմատությամբ այս տարի դրանց թիվն ավելացել է. անցյալ տարի գրանցվել է 110 դեպք, իսկ այս տարի՝ 140 դեպք: «Ունենք նաեւ անչափահասների առեւանգման դեպքեր, որոնք կատարվել են հիմնականում ամուսնության նպատակով», ասաց բանախոսը եւ ընդգծեց. «Բռնությունների առումով առաջին տեղում ֆիզիկական բռնություններն են, հետո՝ սեռական: Ամենուր՝ թե՛ փողոցում, թե՛ ընտանիքում, անչափահասների նկատմամբ բռնությունն առկա է»:

Երեխաները մշտապես պաշտպանության կարիք ունեն: Երեխայի կյանքում թերեւս ոչ ոք այնքան մեծ դեր չի խաղում, որքան ծնողները: Եթե երեխայի հանդեպ բռնություն է կիրառվել կամ շարունակում է կիրառվել, ծնողները լավ կլինի, որ ժամանակին, առանց ամաչելու բռնության մասին հայտնեն պատկան մարմիններին:

Շարունակելով խոսել կանխարգելող աշխատանքներից՝ բանախոսը տեղեկացրեց. «Այսօր մենք իրականացնում ենք պետական ծրագիր. ոստիկանության անչափահասների գործերով տեսուչն աշխատում է 11 դպրոցներում»:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

## Իրավապահ համակարգում բարեփոխումները կշարունակվեն

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանը** նոյեմբերի 24-ին ընդունել է ԵԱՀԿ գլխավոր քարտուղարության ոստիկանության հարցերով ավագ խորհրդական Կնուտ Դրեյերի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը մասնակցել է նաեւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար Սերգեյ Կապինոսը:

Քննարկվել են Հայաստանում ոստիկանության ոլորտում իրականացվող բարեփոխումների հարցեր: Արթուր Բաղդասարյանը տեղեկացրել է, որ ՀՀ-ԵՄ 2009-2011 թվականների գործողությունների ծրագրի համաձայն՝ ոստիկանության համակարգում իրականացվում են ծավալուն բարեփոխումներ:

Զրուցակիցները համակարծիք են եղել, որ բարեփոխումներն առավել արդյունավետ կլինեն, եթե ներառեն ողջ իրավապահ համակարգը: Այդ առումով կարեւորվել է միջազգային կառույցների աջակցությունը Հայաստանին, ընդգծվել է ԵԱՀԿ-ի դերն այդ գործում:

Արթուր Բաղդասարյանը տեղեկացրել է, որ 2011 թվականին բարեփոխումների ծրագիր կիրականացվի նաեւ դատախազության համակարգում, Հայաստանում կստեղծվի արդարադատության ակադեմիա, որը կարեւոր դեր կունենա այս ոլորտում կադրերի պատրաստման եւ վերապատրաստման գործընթացում:

Երկուստեք կարեւորվել է ԵԱՀԿ-ի հետ համագործակցության խորացումը նախատեսված բարեփոխումների իրականացման գործում:

*Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ*

## Ադրբեջանական կայքերը հայ երգահանին դարձրել են ադրբեջանցի

**Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ երգահան Կարեն Գրիգորյանը հետեւյալ դժգոհությունը հայտնեց. «Մի քանի շաբաթ առաջ տեղեկացա, որ Հայաստանից դուրս գտնվող մի շարք կայքերում ներկայացվել է իմ հեղինակային երգերի ձայնասկավառակն առանց թույլտվության»: Այդ կայքերի մեջ կան այնպիսիները, որոնք պատկանում են Ադրբեջանին ու Վրաստանին: Ադրբեջանական կայքերում Կարեն Գրիգորյանի երաժշտությունը ներկայացվել է որպես ադրբեջանական, իսկ երգահանն էլ՝ ադրբեջանցի: Երբ Կարեն Գրիգորյանը նամակով դիմել է, որ իր հեղինակային երգերը հեռացվեն կայքերից, ստացել է շատ կոպիտ պատասխան. «Ինձ ասացին. «Ո՛չ դու առաջինն ես, ո՛չ էլ վերջինը, բոլորին էլ անում ենք ու շարունակելու ենք անել»: Այս պատմության մեջ, սակայն, ամենացավոտն ինձ համար այն էր, որ ադրբեջանական կայքերը փոխել էին անունս ու ներկայացրել ադրբեջանցի: Դա ինձ համար վիրավորական է. ես Հայաստանի քաղաքացի եմ»: Կարեն Գրիգորյանը հավելեց, որ խոսքը իր «Emotions» ձայնասկավառակի մասին է, որը ներկայացվել է առանց թույլտվության: Ձայնասկավառակն ընդգրկում է 14 երգ, իսկ ուղղվածությունն, ըստ երգահանի, հայկական ժամանակակից փոփ երաժշտությունն է:**

**Հեղինակային իրավունքի ոտնահարման այս դեպքն իսկապես ոչ առաջինն է, ոչ էլ վերջինը, սակայն չբացառենք, որ հեղինակային իրավունքները խախտվում են ոչ միայն Հայաստանից դուրս, այլեւ մեր երկրում: Երբեմն օտար երկրում հայ հեղինակների իրավունքները խախտողը, կայքերում առանց թույլտվության նրանց երաժշտությունը ներկայացնողը լինում են հենց մեր հայրենակիցները:**

**Կարեն Գրիգորյանը խորհրդակցել է Հայաստանի լավագույն իրավաբանների հետ, նրանք պատասխանել են, որ ադրբեջանցիների դեմ դատական գործ սկսելն անիմաստ է, քանի որ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ չկա որեւէ հարաբերություն: Առահասարակ, հեղինակային իրավունքի հարցով որեւէ երկրում դատական գործ սկսելն իրատեսական չէ:**

**Ասուլիսի մյուս բանախոսը՝ «Armenian music centre»-ի տնօրեն Սամվել Ամիրաբյանը նշեց, որ դատական գործ սկսելու համար բավականին գումար է հարկավոր: Օրինակ՝ դատը պետք է լինի Միացյալ Նահանգներում, իսկ Հայաստանում ո՞վ կծախսի 100-150 հազար դոլար եւ կմեկնի ԱՄՆ դատական գործի համար: «Փոքր ֆիրմաները չունեն այդքան գումար»:**

**Կարեն Գրիգորյանը կարծում է, որ այս խնդրի մասին այնուամենայնիվ անհրաժեշտ է բարձրաձայնել: ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի փոխնախագահ Արամ Ոսկանյանը նույնպես ներկա էր ասուլիսին: Նա նշեց, որ Հայաստանում պետք է մեդիագրագիտություն լինի. «Լավագույն տարբերակը հասարակությանը մեդիագրագիտության ծրագրերով զինելն է»:**

**Ի. Պ.**



## Մտավորականները պահանջում են ազատ արձակել Նիկոլ Փաշինյանին

**«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի կյանքի նկատմամբ հարձակումները մտահոգում են հասարակությանը:**

**Երեկ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դիմաց՝ Կոմիտասի արձանի հարեւանությամբ, մշակութային շուրջ 100 անվանի գործիչներ՝ գրողներ, դերասաններ, նկարիչներ, քանդակագործներ, ես պարել ազատ խոսքի երկրում, իսկ նման ակցիաների ժամանակ հնչող պահանջները սովորաբար տեղ են հասնում:**

**«Վստահ ենք, որ Հայաստանին՝ որպես եվրոպական արժեքներ դավանող, ժողովրդավարությունը որպես այլընտրանք չունեցող զարգացման ուղի ընտրած պետության, հարիր չէ ազատազրկման մեջ պահել լրագրողի՝ հակառակ միջազգային հանրության, միջազգային նորմերի եւ կոնվենցիաների պահանջների: Հաշվի առնելով լրագրողի կյանքին վտանգ սպառնալու հանգամանքը, անկախ նրանից՝ կիսում ենք նրա քաղաքական հայացքները, թե ոչ, պահանջում ենք անհապաղ քննարկել եւ լուծել Նիկոլ Փաշինյանի արձակման հարցը՝ ի կատարումն Եվրոպական խորհրդի խորհրդարանական վեհաժողովի պահանջների», ասված է մտավորականների տարածած հայտարարության մեջ:**




**կոմպոզիտորներ եւ ճարտարապետներ, բողոքի ձայն էին բարձրացրել ի պաշտպանություն Նիկոլ Փաշինյանի:**

**«Ազատամիտ եւ ազատասեր մարդ եմ, հարգում եմ ազատ խոսքը, ամեն մի կաշկանդում ազատ խոսքի հանդեպ վրդովեցնում է», ասաց դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանը:**

**Ռեժիսոր Տիգրան Խզմալյանի մեկնաբանությամբ՝ Հայաստանը մտավորականների երկիր է: Փաստը, որ ակցիային մասնակցում է շուրջ 100 մտավորական, չպետք է ուրախացնի: «Նրանց թիվը պետք է ավելի մեծ լիներ», նշեց նա:**

**Դերասան Աշոտ Ադամյանը համոզված է, որ մարդիկ ցանկանում**

**Նիկոլ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը, տեղեկացրեց, որ Փաշինյանի առողջական վիճակը լավ է, սակայն նա շարունակում է մնալ պատժախցում:**

**Հ. Հ.**

## Ավելի կարեւոր հարցեր ԱՄՆ-ում

*1-ին էջից*

**Վերլուծաբանի խոսքերում, անշուշտ, իրականություն կա, քանի որ կոնկրես ԱՄՆ-ի միջանկյալ ընտրություններում Օբամայի ներկայացրած դեմոկրատների պարտությունը առավելապես այն հիմնավորումն ուներ, որ ամերիկացիները դժգոհ են վարչակազմի տնտեսաֆինանսական քաղաքականությունից: Շարքային ամերիկացուն բոլորովին պետք չէ, թե ԱՄՆ-ի նախագահը ինչ դեր ունի, եւ ունի՞ արդյոք, ասենք, ղարաբաղյան հակամարտության լուծման գործում: Այնպես որ, վերհիշելով Օբամայի խոսքերը, երբ հայտարարվեցին ընտրությունների արդյունքները՝ «Նման պարտություն ես ոչ մի հաջորդ նախագահի չեմ ցանկանա», կարելի է նույնիսկ վստահություն հայտնել, որ առաջիկայում եւս «Վաշինգտոնում Կովկասի իրավիճակը գրեթե չի քննարկվի», իսկ եթե ավելի իրատեսական լինենք, ապա եթե նույնիսկ քննարկվի՝ միայն տնտեսական հարթակում, որոնք կարող է եւ, ինչպես սովորաբար, առաջնային համարվեն ժողովրդավարություն, արդարություն՝ հավերժ «ամերիկյան սկզբունքներից»:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ավտոմեքենաները խաղարկվելու են մինչեւ դրանց սպառվելը

## ՀԴՄ կտրոնների վիճակահանության նոր կարգի մասին մանրամասներ հաղորդեց ՊԵԿ-ի փոխնախագահ Արմեն Ալավերդյանը

Կառավարության վերջին նիստում հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) կտրոնների վիճակահանության կարգի փոփոխությունների մասին երեկ հավելյալ մանրամասներ հաղորդեց պետական եկամուտների կոմիտեի փոխնախագահ **Արմեն Ալավերդյանը**: Նա նախ ներկայացրեց ՀԴՄ կտրոնների շահումների եւ բոնուսների գործընթացի որոշ ցուցանիշներ ու պարզաբանեց դրանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Ըստ պետեկամուտների կոմիտեի փոխնախագահի՝ ՀԴՄ կտրոնների բոնուսների եւ վիճակահանության համակարգի ներդրման շնորհիվ այս տարվա ընթացքում, նոյեմբերի 18-ի դրությամբ, 37800 քաղաքացիներ ստացել են 99 մլն 700 հազար դրամի շահումներ, իսկ 115 հազար քաղաքացիներ՝ 1 մլրդ 750 մլն դրամի բոնուսներ: Սակայն այս թվերը փոփոխվել են եռամսյակների ընթացքում: Եթե առաջին եռամսյակի համար վճարվել են 337 մլն դրամ բոնուսներ, եւ մեկ քաղաքացուն տրված միջին գումարը կազմել է 5 հազար դրամ, ապա երրորդ եռամսյակում արդեն մեկ քաղաքացուն տրված միջին գումարը կազմել է 25 հազար դրամ: Այս ցուցանիշը պետեկամուտների կոմիտեին հիմնավոր չի թվացել, քանի որ այդ դեպքում ստացվում էր, որ մեկ քաղաքացին միջին հաշվով ստացել է 750 հազար դրամի կտրոն: Կոմիտեն սկսել է քննություն եւ պարզել, որ գործել է հանցավոր խումբ, որը տպագրել է խոշոր արժեքներով կեղծ կտրոններ եւ պետական բյուջեից շորթել խոշոր գումարներ: Ձեռնարկվել են միջոցառումներ, ձերբակալվել են 2 մարդ, եւ քայլեր են կատարվում այդ խմբի մյուս անդամներին եւս ձերբակալելու ուղղությամբ: Այս հանգամանքը, ինչպես նաեւ այն, որ, ըստ Արմեն Ալավերդյանի, բոնուսները դադարել են խթան համարվել եւ չեն ծառայում իրենց նպատակին, դրդել է պետեկամուտների կոմիտեին հրաժարվել դրանցից: Այսինքն, այս տարվա վերջին եռամսյակի կտրոնների դիմաց բոնուսներ չեն տրամադրվելու: Դրա փոխարեն հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների կտրոնները կմասնակցեն 2011-ի հունվարին կայանալիք վիճակահանությանը, որի ժամանակ կխաղարկվեն 30 ավտոմեքենաներ:

Խոսելով ՀԴՄ կտրոնների նոր կարգի մասին՝ Արմեն Ալավերդյանը տեղեկացրեց նաեւ, որ այսուհետեւ շահող է համարվելու նաեւ կտրոնի ութանիշ թվի առաջին եւ վերջին 2 թվերի համընկնումը վիճակահանության թվերի հետ: 2 թվերի համընկնելու դեպքում շահումը կկազմի 500 դրամ, իսկ եթե համընկնեն առջեւի եւ վերջի երկուական թվերը, ապա կտրվի 1000 դրամ շահում: Կոմիտեի փոխնախագահի հավաստմամբ, նոր կարգով շահումների քանակը տեսականորեն կարող է հասնել 75 հազարի:

Նոր կարգով նախատեսվում են խաղարկել ավտոմեքենաներ՝ յուրաքանչյուր խաղարկության համար 10 ավտոմեքենա: Սա նախկինից տարբերվում է նրանով, որ խաղարկվող մեքենաները մինչեւ տվյալ խաղարկության ավարտը պետք է սպառվեն: 8 թիվ համընկնելու դեպքում շահողը կստանա ավտոմեքենա եւ 1 մլն դրամ, 7 թիվ համընկնելու դեպքում՝ ավտոմեքենա եւ 100 հազար դրամ: Եթե այդ թվերը չհամընկնեն, ապա կշահեն 6 եւ 5 թվերի համընկնումները, որոնց կտրոններով կատարվել են առավել խոշոր գնումներ:

«**Ազգի**» հարցին, թե որտեղի՞ց կիմանա 6 կամ 5 թվի համընկնում ունեցող շահողը՝ ինքը շահե՞լ է ավտոմեքենա, թե՞ ոչ, Արմեն Ալավերդյանը պատասխանեց, որ 8 եւ 7 թվի չհամընկնելու դեպքում համակարգիչը դուրս է բերելու առավել մեծ գործարք կատարած 6 կամ 5 թվի կտրոնները, հրապարակվելու են շահող կտրոնի համարը, արժեքը, թվերի համընկնումը, կատարած գործարքի արժեքը, կտրոնը տրամադրած տնտեսվարողի անվանումը եւ այլն: Քաղաքացիները հնարավորություն կունենան ստուգելու այդ ցուցանիշները եւ համադրելու իրենց կտրոնների ցուցանիշների հետ: Տեղեկացվեց, որ 6, 5, 4, 3 թվեր շահողների համար, որոնց բախտ չի վիճակվի մեքենա շահել, կպահպանվեն ներկայումս սահմանված 50 հազար դրամ, 20 հազար դրամ, 5 հազար դրամ եւ 2 հազար դրամ շահումները: Պետեկամուտների կոմիտեի փոխնախագահն ասաց նաեւ, որ 2011-ի պետական բյուջեով նախատեսված է այդ նպատակով հատկացնել 1,5 մլրդ դրամ:

«Հայփոստի» բաժանմունքներում շարունակում են հրաժարվել տրամադրել ՀԴՄ-ի կտրոնների շահումները եւ բոնուսները, ասելով, որ դրա դիմաց գումարներ չեն ստացել», մեր այս դիտարկմանը Արմեն Ալավերդյանը համաձայնեց, ասելով, որ քաղաքացիներից դժգոհություններ են ստանում նաեւ իրենք: Սակայն նա հավաստիացրեց, որ պետեկամուտների կոմիտեն կանոնավոր գումարային փոխանցումներ կատարում է, եւ շահումների տրամադրման առումով ոչ մի խնդիր չպետք է լինի, եւ «Հայփոստում» դրանք պարտավոր են տրամադրել: Ինչ վերաբերում է բոնուսների տրամադրման հետ կապված խնդիրներին, ապա, ըստ կոմիտեի փոխնախագահի, դրանք առաջացան չարաշահումների պատճառով, բայց դրանք սահմանված ժամկետում եւս կտրամադրվեն:

Պատասխանելով լրագրողների հարցերին՝ Արմեն Ալավերդյանը նաեւ հայտնեց, որ շնորհիվ ՀԴՄ կտրոնների վիճակահանության եւ բոնուսների ներդրման, 2009-ին պետության կատարած 3,8 մլրդ դրամ ծախսերի դիմաց պետական բյուջեն ստացել է 12 մլրդ դրամի լրացուցիչ հարկեր, իսկ այս տարվա 8 ամիսների մոտ 2 մլրդ դրամ ծախսի դիմաց՝ մոտ 6 մլրդ դրամի լրացուցիչ եկամուտ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Orange-ն իր աջակցությունը ցուցաբերեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռախուսամարաթոնին Եվրոպայում

Ինչպես ամեն տարի 2000 թ. ի վեր, այս տարի նույնպես Orange-ն իր գործուն աջակցությունը ցուցաբերեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի՝ Ֆրանսիայում անցկացվող համաեվրոպական, 11-րդ հեռախուսամարաթոնին՝ լինելով Ֆրանսիայում հիմնադրամի «Հեռախուսամարաթոն-2010» ծրագրի պաշտոնական գործընկերն ու հովանավորը: Ինչպես նախորդ տարիներին, Ֆրանսիայի Փարիզ, Լիոն, Մարսել, Նիցցա եւ Մոնպելյե քաղաքներում տեղակայված Orange-ի սպասարկման կենտրոնների տարածքը, սարքավորումներն ու հեռախոսակապը տրամադրվել էին մարաթոնի կարիքներին:




Չորս օր, օրական տասներկու ժամ, շուրջ վեց հարյուր հիսուն կամավոր Orange-ի կենտրոններից կատարված իրենց զանգերով հորդորում էին հայ գործարար կառույցներին եւ ընտանիքներին՝ օգնել Հայաստանի եւ Արցախի հեռավոր գյուղերի մեր հայրենակիցներին: Նվիրատվության խոստում կատարեց ավելի քան 11 200 ընտանիք, եւ նախորդ տարվա համեմատ գրանցվեց նվիրատվությունների խոստումների շուրջ 10% աճ:

Իրենց կոչերով հեռախուսամարաթոնին սատարել են կինոդերասան Ժերար Դեպարդյեն եւ հայազգի դաշնակահար-երգահան Անդրե Մանուկյանը, որն այս տարի համահայկական միջոցառման կնքահայրն էր: Orange-ի աջակցությամբ նաեւ 55,000 ձայնային հաղորդագրություն է ուղարկվել Անդրե Մանուկյանի կոչով:

Դրամահավաք միջոցառումը, որին այս տարի մասնակցում էին Ֆրանսիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Հոլանդիայի եւ Հունաստանի տեղական մարմինները, հանգանակեց շուրջ 1 միլիոն 300 000 եվրո: Նվիրատվությունները կուղղվեն Արցախի Տող, Հարթաշեն, Ուխտաձոր, Ակնաղբյուր եւ Սարգսաշեն գյուղերում ջրային համակարգի կառուցմանն ու վերականգնմանը: Կշարունակվեն նաեւ ներդրումները Տավուշի մարզում:

Հեռախուսամարաթոնի փակման հանդիսավոր արարողությանը ներկա էին Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Վիգեն Չիթեչյանը եւ Orange հիմնադրամի նախագահ Միրեյ Լը Վանը: Ֆրանսիայի տեղական մարմնի ատենապետ Պետրոս Թերզյանը սրտագին շնորհակալություն հայտնեց գործընկերներին եւ կամավորականներին ու ներկայացրեց հեռախուսամարաթոնի արդյունքներն ըստ երկրների. 1,1 միլիոնը հավաքվել է Ֆրանսիայից, 70 000 եվրո Գերմանիայից, 18 000 եվրո Շվեյցարիայից, 46 000 եվրո Հունաստանից եւ 21 000 եվրո Հոլանդիայից:

# Դեսպան Համլետ Գասպարյանի հանդիպումները Ռումինիայում

**Նոյեմբերի 17-ին Հայաստանի դեսպան Համլետ Գասպարյանը հանդիպում ունեցավ Ռումինիայի ռեգիոնալ զարգացման եւ տուրիզմի հարցերով պետքարտուղար Էուջեն Կուրտեանուի (Eugen Curteanu) հետ: Զրույցի ընթացքում շոշափվեցին կառավարական մակարդակով Հայաստանի հետ փոխշփումների ակտիվացման, վերոհիշյալ բնագավառներում համագործակցության համատեղ ծրագրերի խրախուսման հարցեր: Երկուստեք կարեւորվեց հատկապես առողջարարական եւ մշակութային տուրիզմի հնարավորությունների օգտագործումը, ճանաչողական այցերի կազմակերպման միջոցով երկու երկրների ներկայացումը լայն հասարակությանը, որի մեջ հատուկ տեղ կարող է գրավել Ռումինիայում հայոց հարուստ պատմամշակութային ժառանգության առկայությունը: Պետքարտուղար Է. Կուրտեանուն պատրաստակամություն հայտնեց ամենայն կերպ աջակցելու վերոհիշյալ ծրագրերին:**

**Այս, ինչպես նաեւ ավելի լայն ընդգրկումով տնտեսական կապերի խթանման հարցերով դեսպան Գասպարյանը նախորդ օրը հանդիպում էր ունեցել նաեւ Ռումինիայի Առեւտրաարդյունաբերական պալատի ղեկավարության հետ: Բուխարեստի Առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Սորին Դիմիտրուի (Sorin Dimitru) հետ կայացած զրույցի ընթացքում քննարկվեցին առեւտրաարդյունաբերական պալատների միջոցով երկու երկրների տնտեսական հնարավորությունների, ներդրումային դաշտի եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տնտեսության առանձին ճյուղերի միմյանց ներկայացման հարցերը: Այս կապակցությամբ երկուստեք կարեւորվեց փոխադարձ այցերի իրականացումը, որի ժամկետների վերաբերյալ արվեցին առաջարկություններ: Սորին Դիմիտրուն պատրաստակամություն հայտնեց Հայաստանի պաշտոնական ներկայացման համար տրամադրել Ռումինիայի Առեւտրաարդյունաբերական պալատի տրամադրության տակ գտնվող էլեկտրոնային եւ գրավոր լրատվամիջոցների հնարավորությունները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաեւ համագործակցել գործարար ֆորումների կազմակերպման հարցում:**

# Ջեռուցման ապահովման ապառիկի մատչելի պայմաններ «Իդեալ համակարգ»-ից

Առաջնորդվելով քաղաքակիրթ առեւտրի ժամանակակից սկզբունքներով՝ «Իդեալ համակարգը» շահավետ առաջարկությամբ է ներկայանում սպառողներին: Ներկայացնելով բազմատեսակ ջեռուցման համակարգեր՝ «Իդեալ համակարգն» առաջարկում է դրանց ձեռքբերման մատչելի պայմաններ: Կազմակերպության ցանկացած խանութ-սրահում գնորդը կարող է պատվիրել ջեռուցման համակարգի հատուկ փաթեթներ՝ ապառիկի շահավետ պայմաններով: 30 ամիս ժամկետ տեւողությամբ ապառիկի պայմաններում գնորդը մեկսենյականոց բնակարանի համար ամսական կվճարի 12.000 դրամ, 15.000 դրամ՝ 2-սենյականոց, իսկ 17.000 դրամ 3-սենյականոց բնակարանի համար:

«Իդեալ համակարգը» հնարավորություն է ընձեռում ձեռք բերելու ջեռուցման համակարգերի փաթեթներ նաեւ հաճախորդների ընտրությամբ՝ ապահովելով բանկերի եւ վարկային կազմակերպությունների հետ համագործակցության փոխշահավետ միջավայր եւ ապառիկի բազմատեսակ հնարավորություններ:




Ապառիկի պայմաններից հաճախորդները կարող են օգտվել նաեւ իրենց նախընտրած ժամկետներով՝ 6 ամսից մինչեւ 3 տարի:

«Իդեալ համակարգի» խանութ-սրահների տնօրեն Սահակ Վարդանյանը նշում է, որ ձմռան սեզոնին ընդառաջ շատերն են ցանկանում ապահովել բնակարանի ջեռուցում. Ցավոք, դա ոչ բոլորին է հաջողվում. պատճառը ոչ բավարար ֆինանսական միջոցների առկայությունն է: «Իդեալ համակարգի» առաջարկած նոր բանաձեւը հնարավորություն կտա բավարարելու ջեռուցման համակարգեր ցանկացողների պահանջները:

«Ջեռուցման կարիք ունեն բոլորը: Հետեւաբար որոշեցինք կազմակերպել այնպես, որ նվազագույն միջոցներով նաեւ ցածր եկամուտ ունեցողները բարելավեն կենցաղային պայմաններն ու ապահովեն բնակարանի մշտական ջեռուցումը», ասաց Սահակ Վարդանյանը՝ հավելելով, որ տեսականին հսկայական է՝ ամեն նախասիրության եւ ճաշակի համար:

Համագործակցելով ջեռուցման ոլորտում առաջատար դիրքեր ունեցող ընկերությունների հետ՝ «Իդեալ համակարգն» առաջարկում է անվտանգության եւ խնայողության բարձր ցուցանիշներով օժտված ջեռուցման համակարգեր եւ առանձին սարքավորումներ:

Հավելենք, որ www.idealsystem.am ինտերնետային կայքի միջոցով հնարավոր է ծանոթանալ եւ պատվիրել կազմակերպության առաջարկած ծառայությունները, իսկ որակյալ արդյունքը սեղմ ժամկետներում կապահովեն փորձառու եւ հմուտ վարպետները: Ինչպես նաեւ կայքի այցելուները կարող են իրականացնել ապառիկ գնումների ժամանակ պահանջվող ամսական վճարների նախնական հաշվարկ՝ կայքում ներդրված հաշվիչների միջոցով:

Հավատարիմ մնալով «Մատչելի եւ բարձրակարգ» կարգախոսին՝ կազմակերպությունում խոստանում են, որ ոչ միայն շարունակելու են ներկայանալ եւ զարմացնել նոր եւ որակյալ ապրանքատեսակներով ու ծառայություններով, այլեւ բնակչությանը մատուցելու են անակնկալներ՝ առաջարկելով բնակարանի ջեռուցումը ապահովող խնայողության նոր շահավետ բանաձեւեր:

Հ. Հ.

# Լեւոն Ահարոնյանի գիրքը

*Սկիզբը՝ նախորդ համարում*

### ԻՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՇՈՒՐՋԸ ՍՏԵՂԾՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հեղափոխության հաղթանակից հետո Իրանի ԻՀ կրթադաստիարակչության նախարարությունը տարբեր շրջաբերականներով արգելում կամ սահմանափակում էր հայոց դպրոցներում հայոց լեզվի եւ կրոնի հայերեն լեզվով դասավանդումը:

Այդ ուղղությամբ Ահարոնյանը, որպես ժամանակի թեմական խորհրդի նախագահ, իր հուշերում գրում է «1981 թ. հոկ. 12-ին (ճիշտը՝ 1981թ. նոյ.11-ին) կրթադաստիարակչության նախարարությունը հրատարակեց հայերի համար անընդունելի 20 կետից բաղկացած մի շրջաբերական, որի գործադրումը հավասարազոր էր հայոց դպրոցների փակմանը» (էջ 475), «այս շրջաբերականը... մեծ իրարանցում ստեղծեց իրանահայ համայնքում... բոլոր աշակերտները դիմեցին դասադուլի... դասադուլը եւ ցույցերը տեւեցին երկու շաբաթ...» (էջ 497):

1981թ. նոյեմբերի 18-ին ներքին գործերի նախարարության կրոնական փոքրամասնությունների հիմնարկը թեմական խորհրդին եւ ԻԱՄՄ-ին (գուցե եւ այլոց) առանձին հրավիրել էին բացատրություն պահանջելու դասադուլի վերաբերյալ: Ահարոնյանը հուշերի էջ 482-ում գրում է. «ԻԱՄՄ-ի նախագահը պետական պատասխանատուին ասում էր, իբր թե աշակերտությունը ցանկանում է շարունակել դպրոցական աշխատանքները, սակայն դաշնակցականները խոչընդոտում են», եւ ավելացնում է. «Շատ զայրացա եւ պատասխանատուին ասացի՝ ավելի լավ էր ձեր ցանկացած տեղեկությունները ստանայիք ինձանից, ոչ թե նման անցանկալի անձնավորություններից»:

Իրոք, ԻԱՄՄ-ի նախագահ լուսահոգի Գալուստ Խանենցը դոկտ. Անդրանիկ Սիմոնյանի ընկերակցությամբ, նույն հարցադրմանը պատասխանելու համար նույն օրը գտնվում էր ներքին գործոց նախարարությունում: Ըստ դոկտ. Սիմոնյանի, 45 րոպե տեւողությամբ հանդիպումից հետո, պետական աշխատասենյակից դուրս գալու պահին շարունակելով զրույցը՝ լուսահոգի Գալուստ Խանենցը բողոքով եւ բարձրաձայն ասում էր. «Հայոց դպրոցները հո դաշնակցականներինը չեն, որ նրանց հետ հակադրվելով փակում եք». սպասասրահում բացված դռան առջեւում գտնվող թեմական խորհրդի երեք ներկայացուցիչները լսում են այդ խոսքերը:

«Աշակերտությունը ցանկանում է շարունակել դպրոցական աշխատանքները, սակայն դաշնակցականները խոչընդոտում են» արտահայտությունը ճիշտ է, սակայն չի արվել լուսահոգի Գալուստ Խանենցի միջոցով: Բայց եթե երբեւիցե ընդունենք, որ այդպես է ասել Խանենցը, դա սխալ արտահայտություն կամ զրպարտանք չի եղել: Եղել է լոկ իրականություն, որը հաստատում է նաեւ Ահարոնյանը հուշերի 497 էջում, որտեղ գրում է. «Ներքին գործոց նախարարությունը պահանջում էր վերջ դնել դասադուլին... 25 նոյեմբերի 1981թ. «Ալիք» օրաթերթում տպագրված էր մի հայտարարություն... որում հեղինակը անդրադառնալով «Սողոմոնյան դպրոցում» տեղի ունեցած համահավաքին... ավելացրել էր, որ Ահարոնյանը պահանջել է աշակերտներից վերջ դնելով դասադուլին եւ համահավաքներին, վերադառնալ իրենց դասարանները... ապա մի պատասխանատու հայտարարել է, թե հարգելով թեմական խորհրդի պահանջը, ավարտում ենք դասադուլը»: Այս հայտարարությունը զարմացնում է Ահարոնյանին, որը եւ գրում է. «Ինձ համար պարզ էր, որ սա կուսակցության ուղղակի որոշումն է... այս հայտարարությունը արվել է առանց թեմական խորհրդի եւ իմ տեղեկությամբ» (էջ 497):

Ամեն ինչ ասված է: Կուսակցությունն է կազմակերպում ցույց, համահավաք, դասադուլ եւ ցանկացած պահին վերջ դնում նրանց: Խլրտում են ստեղծում դպրոցներում, ապա գոչում. «Պայքար, պայքար մինչեւ հաղթանակ», որի հետեւանքով «Սահակյան դպրոցի 21 անմեղ աշակերտներ երկու ամիս հայտնվում են բանտում» (էջ 589):

Սակայն ամենեւին էլ պարտադիր չէր դիմել այսպիսի ծայրահեղ քայլերի ու գրգռիչ քարոզչության, վրդովեցնել աշակերտներին ու նրանց ծնողներին, նրանց կանգնեցնել կառավարության դեմ, շփոթ, սարսափ ու զայրույթ ստեղծել համայնքում, երբ առաջին իսկ պաշտոնական կապերը դրական արդյունք են տալիս, եւ երկրի ղեկավարները հաստատում են, որ շրջաբերականները սխալ են, եւ խոստանում են բեկանել դրանք:

Որպես փաստ մեջբերենք գրառումներ Ահարոնյանի հուշերից: Նա էջ 399-ում գրում է. «1981թ. հուլիսի 30-ին Դատական գերագույն ատյանի նախագահ դոկտ. Բեհեշթին, լսելով մեր մտահոգությունները եւ պահանջները դպրոցների վերաբերյալ, ասաց. «Կիրականացվեն ձեր ցանկությունները, բացի դպրոցների երկսեռ լինելուց»: Իսկ էջ 455-ում կարդում ենք. «Ես եւ Սրբազան հայրը տարբեր առիթներով երեք անգամ տեսակցություն ենք ունեցել դոկտ. Բեհեշթիի հետ եւ միայն մեկ անգամ ենք արժանացել նրա սառն ու չոր վերաբերմունքին... եւ այդ էլ այն պատճառով, որ պատվիրակության 5 անդամներից 2-ի բերանից օղու հոտ էր փչում»:

Իսկ գրքի 491-րդ էջում հեղինակը հաստատում է. «1981-ի նոյեմբերի 28-ին Դատական գերագույն ատյանի նախագահ Այաթոլլահ Արդաբիլիի գրասենյակից մեզ տեղեկացրին, որ դատախազության իրավաբանների խորհրդի քննարկումներից հետո առկախվում է 20 կետանոց շրջաբերականի գործադրումը...»: Անմիջապես գումարվեց թեմական խորհրդի նիստ... Ժողովում որոշվեց այս հաճելի լուրը ես հաղորդեմ աշակերտներին... որոնք դեռ շարունակում էին դասադուլը... ես նախ ողջունեցի աշակերտության կիրառած քայլը (դասադուլը)... եւ ապա հաղորդեցի այդ ուրախ լուրը»:

1981թ. նոյեմբերին Իրանահայ ազգային եւ մշակութային միությունը (ԻԱՄՄ) հանդես եկավ մի հայտարարությամբ՝ «Ծրագիր, պահանջներ հայկական դպրոցների մասին» անվան տակ: ԻԱՄՄ-ն այս հայտարարությամբ պահանջել էր, որ վերացվեն հայոց դպրոցների համար ստեղծված սահմանափակումները, եւ շեշտել. «Կրթական աշխատանքը պետք է տեղի ունենա մշակված կենտրոնական ծրագրով եւ ոչ թե այս կամ այն խմբի հայեցողությամբ ու քմահաճույքով», եւ առաջարկել էր. «Հայերեն լեզվի ու գրականության, հայ ժողովրդի պատմության ու կրոնի ուսուցումը պետք է պարտադիր լինի բոլոր հայ աշակերտների համար, անկախ նրանց հաճախած դպրոցից ... հայ աշակերտությունը տեղաբաշխվի հայկական դպրոցներում ... բոլոր առարկաների դասավանդումը, հնարավորին չափով, կատարվի հայ ուսուցիչների կողմից, այդ ուղղության կառավարությունը պետք է հատուկ բյուջե նկատի առնի հայ ուսուցիչներ պատրաստելու համար... խորհրդարանի կրթա-դաստիարակչական հանձնախմբին կից պետք է ստեղծվեն փոքրամասնությունների բաժին կրթադաստիարակչական օրինագծերը նախապես քննարկելու եւ մշակելու համար... կրթա-դաստիարակչական նախարարության կից, որպես պետական գործադիր մարմին, պետք է ստեղծվի մշտական կոմիտե՝ բաղկացած փոքրամասնությունների ներկայացուցիչներից եւ... որի իրավասություններից պետք է լինեն փոքրամասնություններին հատուկ կրթական ծրագրի մշակումն ու գործադրումը, ուսուցչադաստիարակչական կազմի ընտրությունը, դասագրքերի բարեփոխումն ու վերամշակումը...»:

Այդ առաջարկների իրականացումը արմատական փոփոխություն ու նոր շունչ կմտցներ մեր դպրոցներում, այն այլեւս իրավունք չէր տա ինչ-որ շրջաբերականով խաթարել հայոց դպրոցը:

Այդ հայտարարությունը եւ առաջարկները հրատարակումից 28 տարի անց դեռ մնում են արդիական, միայն այդպես կարելի է ունենալ իր կոչմանը հարազատ հայոց դպրոց:

Ահարոնյանը այս հայտարարությունը ներկայացնելու եւ քննադատելու համար իր գրքում հատկացրել է 7 էջ (էջ 482-ից 489) եւ այն անվանել է անիմաստ, խաբուսիկ: Նա հեգնական վերաբերմունք է ցուցաբերել նրանում տեղ գտած առաջարկների ու պահանջների նկատմամբ, դրա նախաբանը համարել է լոզունգային, իսկ հինգերորդ կետում նշված «ներկայացուցիչ» բառը շփոթել է պատգամավոր բառի հետ, եւ ըստ այդմ էլ ներկայացրել իր վերլուծությունները: Նա այս հայտարարությունը համարել է հայավնաս, եւ հայտարարության հեղինակին անվանել այլմոլորակային, մեջբերելով տարբեր ասացվածքներ, օրինակ «դեպի գյուղ ճամփա չէին տալիս, գյուղապետին էր փնտրում»: Սա նշանակում է, որ ըստ Ահարոնյանի, ԻԱՄՄ-ն ավելորդ պահանջներ էր ներկայացնում կառավարությանը, իսկ քիչ անց հեղինակը մատնում է իր շրջապատի գլխավոր մտավախությունը, որը ոչ թե հայոց դպրոցներն էին, այլ «ազգային իշխանության», այսինքն՝ դաշնակցության տիրապետությունը այդ դպրոցներում (էջ 486 եւ 488):

«ԳՅՈՒՂ» մտնելու համար պետք է ունենալ ողնաշար: Պետք է լինել անկեղծ, սթափ, հաստատակամ ու ինքնավստահ, ունենալ երկրի օրվա քաղաքականությունը վերլուծելու կարողություն, եւ առանց կաշկանդումների ու հետին նպատակների գյուղ մտնել: Որպես համայնքի ներկայացուցիչ՝ պետք է լավատեղյակ լինել նրան վերապահված իրավունքներին: Պետք է լինել լավածանոթ իր ներկայացրած խորհրդի ու համայնքի անցյալի գործունեությանը:

Ահարոնյանը «գյուղ մտնելու» իրավունքը վերապահում է իրեն եւ իր ղեկավարած թեմական խորհրդի անդամներին, բայց տեսնենք, թե ինչպիսի մարդիկ էին դրանք, հենց իր վկայությամբ:

Անփորձ թեմական խորհուրդը (էջ 388), որի անդամները Իրանի դատական գերագույն ատյանի նախագահի մոտ ներկայանում են «ԽՄԱԾ» վիճակում եւ խոստանում են անխոս մնալ բանակցության ընթացքում (էջ 455), կամ՝ որի փոխնախագահը «Ալիք» օրաթերթի հետ ունեցած հարցազրույցում ոչ ճիշտ տեղեկություններ է փոխանցում ընթերցողին (էջ 1085), կամ՝ հենց ինքը՝ խորհրդի անփորձ նախագահը (էջ 388), որին նեղն ընկած ժամանակ, հարցազրույցի պահին, փրկում են «Սիփան» միության անդամները (էջ 432), եւ որի համար հարցական է, թե ինչպե՞ս կարելի է գործակցել եւ համաձայնության հանգել պարսիկ հոգեւորականների հետ (էջ 404), որը «ներկայացուցիչը» պատգամավորի հետ շփոթելով՝ սխալ է ըմբռնում նախադասությունների իմաստը եւ հեգնանքով է խոսում ԻԱՄՄ-ի լուրջ հայտարարության մասին, չըմբռնելով «ԲԱՆԻ» էությունը, նրա հեղինակին անվանում է այլմոլորակային (էջ 485): Իսկ ի՞նչ ասել թեմական խորհրդի վերադաս եւ նրան նշանակող պատգամավորական ժողովի մասին, որը կազմված է «թերուս խանութպաններից ու արհեստավորներից... որոնք զուրկ են երկրի օրվա քաղաքականությունը ըմբռնելու կարողությունից (էջ 972), որոնց ընդհանուր մտավոր մակարդակը Արամ Ա. կաթողիկոսը գնահատում է «շատ ցածր» (էջ 1079): Եվ վերջապես՝ այդ բոլորին իր բուռը հավաքած կուսակցությունը, որը հրապարակ չէր գալիս իր անվամբ...եւ որի անդամները լքեցին համայնքն ու երկիրը (էջ 492)՝ իրենց կյանքը փրկելու համար, տարիներ թաքնվեցին կառավարությունից (էջ 1000):

Հիշեցնենք նաեւ, որ ԻԱՄՄ-ի ներկայացրած առաջարկներից որոշները հետագային իրականացան, ինչպես հայոց լեզվի եւ կրոնի ուսուցիչների պետական կարգավիճակ ստանալը եւ փոքրամասնություններին կրթական, մշակութային հատուկ բյուջեի հատկացումը, որոնց մասին Ահարոնյանը եւ իր շրջապատի մարդիկ չէին էլ կարող մտածել, որովհետեւ նման բաները եւ, ընդհանրապես, այն ինչ դուրս էր նրանց իշխանության սահմաններից, համարվում էր կոմունիստական սպառնալիք (էջ 488):

### ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ահարոնյանը այս գրքի առնվազն 150 էջը (շուրջ 10 տոկոսը) հատկացրել է հայոց դպրոցներին, սակայն այս բոլորի մեջ մի նախադասություն անգամ չկա դպրոցների կրթական մակարդակի, դասավանդվող հայագիտական առարկաների, դասագրքերի աննախիթար վիճակի, դպրոցներում տարվող մշակութային աշխատանքների մասին: Գոհացուցիչ չէ հայոց դպրոցների կրթական մակարդակը, վկան՝ ուրբաթօրյա դպրոցների գոյությունն է, որին միայն Թեհրանում մասնակցում են առնվազն հայոց դպրոց չհաճախող 250 հայ աշակերտ-աշակերտուհիներ: Աշակերտների սակավության պատճառով փակվեց տասնամյակների անցյալ ունեցող «Քուշեշ Դավթյան» հայոց դպրոցը, այն դեպքում, երբ դպրոցի հարեւանությունում գտնվող մի ոչ հայկական դպրոցի աշակերտության 100-ից ավելին հայեր են: Հայոց դպրոցի շրջանավարտը չի կարողանում անսխալ գրել մի դիմումնագիր կամ նամակ:

Մինչեւ 20 տարի առաջ Հայաստանից ձրիաբար ստացված գրականությամբ, սփյուռքի շատ դպրոցներում ստեղծվել են հարուստ գրադարաններ, սակայն իրանահայ աշակերտը զրկված է այդ բարիքից՝ «սխալ» ուղղագրության պատճառաբանությամբ: Հայ երիտասարդին առիթ չէր տրվում պարծենալ իր հայրենիքի ձեռքբերումներով ու ճանաչել գիտության, արվեստի, սպորտի հայ ռահվիրաներին: Այդ էլ այն ժամանակ, երբ ֆրանսիացի գրող **Ժան Փիեր Ալեմը** վերը հիշատակված գրքի էջ 143-ում գրում է, թե Հայաստանը «իր ակադեմիայով, համալսարանով եւ հաստատություններով հայ ժողովրդի միջին մշակույթը բարձրացրեց եւ հասցրեց այնպիսի մի մակարդակի, որին իր պատմության մեջ չէր հասել»:

Նոր ուղղագրության մասին Դաշնակցության ժամանակի պարագլուխներից պրն. **Թաթուլ Օհանյանը** 2008 թ. լույս տեսած իր «Խոհեր եւ մտածումներ» գրքի էջ 227-ում վկայում է. «Ուղղագրութեան երկփեղկւածութեան ամենամեծ տուժողը եւ վնասուողը իրանահայութիւնն է», եւ էջ 234-ում հաստատում է, որ դա եղել է հակահայաստանյան ակտ: Նա գրում է. «Նոր ուղղագրութեան մերժումը իրանահայութեան կողմից ոչ միայն նրա ճիշտ ու սխալի խնդիրն է եղել, այլ նաեւ քաղաքական կողմը, որովհետեւ նման ուղղագրական բարեփոխումը կատարւեց սովետական իշխանութեան կողմից, քաղաքական նպատակների համար»: Թաթուլ Օհանյանը թող այն ժամանակ, երբ պարբերաբար անդամակցում էր Անթիլիասում գումարվող Ազգային ընդհանուր ժողովին, եւ Իրան-Հնդկաստան հայոց թեմի հասարակական, քաղաքական, տնտեսական, կրթական զարկերակները տասնյակ տարիներ գտնվում էին իր ձեռքում, ներկայացներ ու հաստատեր այս տեսակետը, որպեսզի չտուժեր եւ չվնասվեր իրանահայությունը, ոչ թե հիմա, երբ դուրս է մնացել ազգային եւ կուսակցական վերնախավի շարքերից: Կարող է նա կուսակցական նեղ կաղապարներից ու կաշկանդումներից ձերբազատվելուց հետո է առիթ ունեցել վերանայելու իր ղեկավարած ժամանակաշրջանում կուսակցության ունեցած տեսակետները: Եկեղեցու մասին եւս նա արեց իր կուսակիցների համոզմունքին հակառակ մի հայտարարություն, «Ալիք» օրաթերթում տպագրած մի գրությամբ նա քննադատեց բոլոր նրանց, որոնք «Ամենայն Հայոց» կոչումը անհարգի կցում են «Մեծի տանն Կիլիկիո» գահակալի անվանը: Սակայն այս ամենով հանդերձ ողջունելի է «տեսակետների» նման դրական փոփոխությունը, համարձակություն է ... եւ պետք հրապարակավ հայտարարել, որ սխալ են եղել տասնամյակների քո հետեւած ու պաշտպանած տեսակետները, որոնք եղել են քո գաղափարական հակառակորդների հիմնական ուղեգիծը:

Հենց միայն թեմերի անջատման, ուղղագրության եւ, ինչո՞ւ չէ, նաեւ իրանահայ դպրոցների պարագան բավական են համոզվելու, որ Դաշնակցության համար կուսակցական շահերը միշտ էլ վեր են եղել ազգի ընդհանրական շահերից:

Սակայն այս բոլորից տեղյակ Ահարոնյանը ինչո՞ւ է զայրանում այլոց վրա: Նա չգիտե՞ր, որ այդ օրերին ժողովրդի համակրանքը չվայելող ազգային իշխանավորների ու նրանց պաշտպանող կուսակցության դիմաց, հանձինս այսպես անվանված «ձախերի», «կոմունիստների» ու ԻԱՄՄ-ի՝ կա մի ուժ, որը իր ամբողջ մտայնությամբ ու գործելակերպով խափանում է նրանց միահեծան իշխանությունը: Ի՞նչ է թաքնված Ահարոնյանի կողմից Խանենցին վերագրված արտահայտության խորքում, արդյոք Խանենցը զրպարտո՞ւմ էր, գո՞րծ էր հարուցում, լրտեսո՞ւմ էր: Ոչ, դրա կարիքը չկար, Իրանի պետական մարմինները շատ լավ տիրապետել են բոլոր անցուդարձերին, հենց միայն ուշադիր ընթերցելով ու վերլուծելով այնօրյա «Ալիք»-ի հաղորդած լուրերն ու հոդվածները:

Այս կապակցությամբ Ահարոնյանը վկայում է, որ «Ամենայն հայոց երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսին զարմացրել էին իր հետ բանակցող իրանական կողմի խոր ու լայնածավալ տեղեկությունները Հայաստան աշխարհի, Հայաստանյայց առաքելական եկեղեցու, երկու կաթողիկոսությունների, հայկական սփյուռքի, կուսակցությունների ու իրանահայության մասին» (էջ 1275 եւ 1282): Հայկական բոլոր խնդիրների վերաբերյալ պարսկերեն լեզվով գոյություն ունի անսահման գրականություն: Հարյուրավոր գրքերում կարելի է հանդիպել հայության ու Հայաստանի մասին ամենատարբեր հոդվածների: Հաշեմի Ռաֆսանջանին 1984 թ. հունիսի 16-ին Թեհրանի ուրբաթօրյա աղոթքի ընթացքում, որը ուղիղ եթերով ձայնասփռվում էր ամբողջ Իրանի տարածքում, բողոքով ու տրտնջանքով է անդրադարձել իրանահայության հասարակական խնդիրներին: Նրա գրչին պատկանող «Ամիրքաբիրը՝ կամ գաղութատիրության դեմ պայքարի հերոսը» գրքում, որը հրատարակվել է 1967-թվին, առկա են նրա տեսակետները քրիստոնյա եկեղեցիների մասին: Մամուլը եւս հագեցված է հայության մասին ամենաթարմ լուրերով ու շրջահայաց վերլուծական հոդվածներով: Պարզապես Դաշնակցության գերխնդիրը նոր վարչակարգում իր մենատիրությունը պահպանելն էր, ահա թե ինչու նա ամեն տեղ տեսնում էր միայն ախոյաններ, թշնամիներ, լրտեսներ, որոնցից հարկավոր էր ձերբազատվել ամեն գնով, այդ թվում նաեւ խեղաթյուրելով, իսկ լավագույն դեպքում նաեւ՝ լռության պարիսպ քաշելով համայնքի կյանքում այլոց դրական ներկայության շուրջ: Հենց այս հոգով էլ գրի են առնվել Ահարոնյանի հուշերը:

# եւ իրականությունը

## ԴՈԿՏ. ՀՐԱՉ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

1980թ. սեպ. 2-ին Իրանի Ի. խորհրդարանում հարավային իրանահայության պատգամավոր դոկտ. **Հրաչ Խաչատրյանը**, ելույթ ունենալով խորհրդարանի պաշտոնական նիստում, արծարծելով մի շարք հրատապ խնդիրներ, պահանջեց նաեւ սանձել այն պատասխանատուներին, որոնց արտահայտությունները փոքրամասնությունների մեջ առաջացնում են մտահոգություն եւ առիթ հանդիսանում բազում ասեկոսների նրանց դպրոցների փակման շուրջը: Նա իր ելույթում անդրադարձավ նաեւ հայոց դեմ իրագործված ցեղասպանության եւ Հայ առաքելական եկեղեցու իրավունքներին:

1981թ. Ապրիլի 23-ին դոկտ. Խաչատրյանը, խորհրդարանի պաշտոնական նիստում կատարեց աննախընթաց մի քայլ: Նա իր ելույթը ամբողջությամբ նվիրեց մեր ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանության փաստին եւ համարձակորեն բարձրացրեց հայ ժողովրդի իրավացի պահանջատիրության ձայնը:

Դոկտ. Խաչատրյանի ելույթը ամբողջությամբ կամ մասամբ տպագրվել է այնօրյա իրանական մամուլում եւ դարձել Իրանի ժողովուրդների ուշադրության առարկա: Սակայն այս խիզախ ելույթին չանդրադարձան ոչ «Ալիք» օրաթերթը, ոչ էլ դաշնակցական այլ լրատվամիջոցները:

Նույն ելույթների մասին ոչ մի ակնարկ չկա նաեւ Ահարոնյանի հուշերում, փոխարենը էջ 618-ում նա գրում է. «Իրանի պատմության ընթացքում Հրայր Խալաթյանը առաջին հայ պատգամավորն էր, որ 1983 թ.հունիս 6-ին ելույթ ունեցավ Իրանի խորհրդարանում»:

Հուշագրողը իրավունք ունի, իհարկե, գրելու միայն իր համար թանկ ու նվիրական բաների մասին, բայց այս տեսանկյունից մի քիչ այլ է անաչառ պատմաբանի պարագան, որին եւ հավակնում է Ահարոնյանը:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Իրանահայ հասարակական-քաղաքական կյանքում ընտրությունները միշտ էլ եղել են տարբեր խմբավորումների միջեւ քարոզչության եւ պայքարի մրցադաշտ: Պրն Լ. Գ. Մինասյանը իր «Նոր-Ջուղան աւելի քան մէկ եւ քառորդ դարում 1856-1996» գրքի էջ 37-ում գրում է.«...1922 թւի ընտրապայքարը, այդ օրերին, երբ հարաւային իրանահայութեան համար նոր պատգամաւորի ընտրութիւն պէտք է կատարւէր, ներկայացւած էր երկու թեկնածու, մէկը դաշնակցականների կողմից՝ Արամ Մովէլը, իսկ միւսը հակառակորդների կողմից՝ Յովսէփ Միրզայեանը:... Ահա այս պայքարների նախօրեակին եւ ընթացքում, սպանւում են Սրբ. Ամենափրկիչ վանքի երկու միաբան հոգեւորականները՝ Խորեն եւ Եզնիկ Վարդապետները»: Եվ շարունակելով էջ 40-ում գրում է. «Այդ օրերում խիստ պայքար է ստեղծւում նաեւ դպրոցների հոգաբարձութեան ընտրութեան ժամանակ, նպատակ ունենալով դպրոցների ղեկավարութիւնը մէկը միւսի ձեռքից խլելու...»:

Այժմ տեսնենք, թե ինչպես են տեղի ունենում ընտրությունները մեր օրերում: Ահարոնյանը բազմիցս անդրադարձել է այս խնդրին եւ, իհարկե, միայն այն դեպքերում, երբ ինքն է անմիջական տուժողը:

Հուշերի էջ 800-802-ում հեղինակը այսպես է նկարագրում 1983թ. կայացած Իրանի Ի. խորհրդարանի ընտրությունների ընթացքը, «....Սողոմոնյան դպրոցի տեսուչ Պ. Նորայր Էլսայանը Դաշնակցության կողմից առաջադրվել էր թեկնածու, իսկ ձախակողմյանները ներկայացրել էին դոկտ. Վիգեն Զարգարյանին... ընտրապայքարը սկսելուց հետո... երեք օր ընտրություններից առաջ... ընտրությունների դիտորդ պահապան խորհուրդը չհաստատեց Էլսայանի թեկնածության իրավասությունը:... Երեւի Դաշնակցություն կուսակցությունը նախատեսել էր նման բան, եւ ներկայացրել էր նաեւ այլ թեկնածու, որն էր ոչ հանրաճանաչ ճարտ. Վարդան Վարդանյանը: ...Ուստի փոխվեց կուսակցության թեկնածուն: ...Որոշված էր մենք բոլորս ամեն կերպ հովանավորենք նրան, որպեսզի նա ընտրվի հյուսիսային իրանահայության պատգամավոր, ես անձամբ «Զարմիալ» միությունում բանախոսեցի նրա օգտին: Թեմական խորհուրդը չէր ցանկանում ձախ հոսանքի ներկայացուցիչը ընտրվի պատգամավոր... կարճ ժամանակում ստեղծվեց հզոր ճակատ եւ բոլորի ջանքերով կարողացանք ճարտ. Վարդան Վարդանյանին ուղարկել խորհրդարան»:

Նույն նստաշրջանին հարավային իրանահայության պատգամավորի պաշտոնը զբաղեցնելու համար ժողովրդական ճակատը կրկին ներկայացրել էր Ի. Ի. խորհրդարանի առաջին նստաշրջանի պատգամավոր դոկտ. Հրաչ Խաչատրյանին, իսկ դաշնակցականները ներկայացրել էին պրն. Արտավազդ Բաղումյանին: Այս ընտրապայքարը ահռելի կեղծիքների շնորհիվ ավարտվեց ի շահ Դաշնակցության: Սակայն ժողովրդական ճակատի բուռն բողոքից հետո բացահայտվեցին կեղծիքները եւ բեկանվեց այն: Այս կեղծված ու բեկանված ընտրությունների մասին, չգիտես ինչու, լռել է Ահարոնյանը:

Այս թափուր տեղի համար նոր ընտրություններ տեղի ունեցան վեց ամիս անց, որում տեղի ունեցած դեպքերի մասին էլ էջ 802-ում Ահարոնյանը գրում է. «Դաշնակցություն կուսակցությունը Սպահանում բավարար թվով կողմնակիցներ չուներ, եւ եթե կուսակցության Թեհրանի կազմակերպությունը ժամանակին չաշխատեր, Սպահանում Դաշնակցության թեկնածու Բաղումյանի ընտրվելը դժվար կլիներ, նախքան ընտրությունների կայանալը, Թեհրանի հայերը մի քանի ավտոբուսներով հանրահայտ կուսակցական Ժորժիկ Աղազարյանի ղեկավարությամբ գնացին Սպահան եւ Շահինշահր քաղաքները (իրենց ընտրատարածքից դուրս, հեռավորությունը 430 կիլոմետր) եւ քվեարկեցին Բաղումյանի օգտին, այսպիսով՝ նա ընտրվեց հարավային իրանահայության պատգամավոր»:

Այսպիսով Ահարոնյանը խոստովանում է, որ թեմական խորհուրդը դեմ էր որպեսզի ձախ հոսանքի ներկայացուցիչը ընտրվի պատգամավոր: Հարց է առաջանում՝ թ. խորհրդի կանոնադրության ո՞ր կետի համաձայն է կայացել այս հակաօրինական որոշումը, չէ՞ որ թ. խորհուրդը, որպես թեմի բարձրագույն գործադիր մարմին, իրավունք չունի որդեգրելու նման քաղաքականություն, պետք է լինի անկողմնակալ բոլորի նկատմամբ, եւ զբաղվի իրեն վերապահված պարտականությունների իրականացմամբ, ոչ թե վերածվի ինչ որ թեկնածուի ընտրական շտաբի: Ահարոնյանը նաեւ խոստովանում է. որոշված էր, որ մենք բոլորս ամեն կերպ հովանավորենք ճարտ. Վարդան Վարդանյանին, եւ հայտարարում է, թե ինքը «Զարմահալ» միությունում ելույթ է ունեցել նրա օգտին, դա, իհարկե, իր իրավունքն է, բայց նա իրավունք չուներ թեմ. խորհրդի նախագահի իր հանգամանքը, ինչպես նաեւ ազգային հարստությունն ու հնարավորությունները որեւէ կերպ ի սպաս դնել ցանկացած թեկնածուի:

Ստացվում է, որ ամբողջ գրքում Դաշնակցության ապօրինությունների դեմ բողոքող Ահարոնյանը ինքն էլ մասնակից եղել սույն ապօրինություններին, դրանով իսկ կորցնելով արդարության եւ ճշմարտության անունից խոսելու եւ մանավանդ նույն անարդարությունների դեմ անհավասար պայքար մղող «ձախերի»-ն դասելու ու դատապարտելու բարոյական իրավունքը:

2000 թ. հոկտ. 20-ին տեղի ունեցան Թեհրանի հայոց թեմի 12-րդ պատգամավորական ժողովի ընտրությունները: Այդ ընտրություններին մասնակցելու նպատակով Ահարոնյանը դրել էր իր թեկնածությունը:

Այդ մասին նա վկայում է՝. «Թեհրանի առաջնորդարանում Արամ Ա կաթողիկոսի հետ հանդիպման ժամանակ վեհափառն ասաց, որ խոսել է կուսակցության պատասխանատուի հետ եւ առաջարկել է թույլ տալ մի քանի ինձ նման այլախոհների կամ մի քանի չեզոք անձանց անդամակցել պատգամավորական ժողովին» (էջ 1080): Եվ նա անդրադառնալով այս ընտրությունների արդյունքներին՝ գրում է, թե քվեարկության ավարտից հետո «...ընտրություն կայացնող հանձնախումբը, ներքին գործերի նախարարության ներկայացուցչի ներկայությամբ, մինչեւ կեսգիշեր հաշվում եւ գրառում էր ժողովրդի քվեները, իմ ընկերներից մեկը, որ նույն հանձնախմբի անդամ էր, մյուս օրը զանգահարեց ինձ եւ շնորհավորեց բարձր քվեներ շահելու համար... սակայն երեկոյան «Ալիք» օրաթերթը ստանալուց հետո, ես եւ ընկերս զարմանքով տեսանք, որ իմ անունը ընտրվածների ցանկում չկար» (էջ 1089): Դարձյալ առաջանում է հարցերի շարան, մի՞թե անհրաժեշտ է որեւէ կուսակցության թույլտվությունը ընտրվելու համար, հապա ո՞ւր մնացին ժողովրդի քվեները, ստացվում է՝ կուսակցությունը ինչպես ցանկանում, այնպես էլ բաշխում է դրանք եւ իր ցանկացած անձանց հանում քվեատուփերից: Մի՞թե նշանակովի է պատգամավորական ժողովի անդամակցությունը, եթե այո, ինչո՞ւ բանի տեղ չեն դրել վեհափառի առաջարկությունը եւ բարեխոսությունը Ահարոնյանին նշանակելու համար:

Ահարոնյանը հուշերում խոսում է նաեւ ընտրապայքարում իր քարոզարշավի աշխատանքները խոչընդոտելու մասին (էջ 1081), չեն թողել ինքը ընտրվի (էջ 1091): Ժամանակին նա այս ընտրությունների կապակցությամբ մի հոդվածով հանդես է եկել «Լույս» երկշաբաթաթերթի 15-րդ համարում, որտեղ կսկիծով քննադատել է քվեարկության ընթացքում տեղի ունեցած անօրինությունները ու կեղծիքները: Նա գրում է. «Այս ընտրություններում կուսակցությունից վտարված որոշ անձինք միանալով ոչ կուսակցականներին՝ պատճառ դարձան, որ Նարմաք թաղում ոչ կուսակցականներ կազմեն ընտրվածների մեծամասնությունը: Այս խնդիրը այնքան էր զայրացրել կուսակցականներին, որ նրանք դիմեցին անմարդկային արարքի ... կեսգիշերին կուսակցության երեք անդամներ գնում են կուսակցությունից վտարված մի անձնավորության տան դռան, դուրս կանչում տնից, եւ դանակի հարվածներով վիրավորում են նրան (էջ 1091):

Այս եւ նման բացահայտումները ոչ մի նորություն չեն բացահայտում, դրանք հետաքրքիր են միայն որպես, այսպես կոչված, «ազգային իշխանությանը» մոտ կանգնած մարդու ուշացած խոստովանություններ:

Բայց տեսնենք, թե ի՞նչ կարծիքի է այս մասին ՀՅԴ. բյուրոյի անդամ պրն Վիգեն Բաղումյանը:

«Յույս» երկշաբաթաթերթին տված հարցազրույցում, որը տպագրվել է նույն թերթի 29-րդ համարում (2 հուլ. 2008), պատասխանելով լրագրողի մի հարցին՝ Բաղումյանը ասում է. «...տեղի են ունենում ընտրութիւններ: Մենք ոչ փող ենք տալիս մարդկանց, որ մեզ քւէարկեն, ոչ արգելում ենք ուրիշին, որ քարոզչութիւն տանի: Ամէն ինչ տեղումն է, եւ ամէն դէպքում, սիրեն թէ չսիրեն, մենք մեծամասնութիւն ենք լինում: Կարելի է որոշների կարծիքով անարդարօրէն, նրանց կարծիքով առանց արժանի լինելու»:

Դե, իհարկե, ոչ ոք իր թանին թթու չի ասի, բայց գոնե ինքը գիտի՞, որ իր թանը թթու է, թե այնքան է տարված իր «մեծամասնությամբ», որ կորցրել է համի զգացումը, բացի քաղցրության զգացումից:

Դատողությունը թողնում ենք ընթերցողին:

1982թ. փետրվարի 23-համահավաքում Ահարոնյանը այլախոհ միություններին, կազմակերպություններին եւ անձնավորություններին անվանում է անտեղյակ, նրանց հայտարարությունները խաբուսիկ եւ նրանց գործունեությունը հայավնաս, եւ նրանց խորհուրդ է տալիս, եթե ցանկանում են պայքարել, մասնակցեն ընտրություններին, եւ երբ ժողովուրդը քվեարկեց նրանց օգտին, անդամակցեն թեմական խորհրդին եւ պատգամավորական ժողովին (էջ 525): Ի՞նչ է, այդ ժամանակ նա չգիտե՞ր, թե ի՞նչ են այդ ընտրությունները, իսկ ի՞նչն էր խանգարում նրան տեսնել իրականությունը, գուցե նախագահի աթո՞ռը:

## ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1986թ. Նոր Ջուղայում անօրինական հրազեն կրելու մեղադրանքով ձերբակալվում է ոմն դաշնակցական: Հարցաքննության ընթացքում բացահայտվում են նրա գործունեության նպատակը եւ գործուղող անձն ու կազմակերպությունը, ձերբակալվում են պատկան կուսակցության պարագլուխները, որոնք էլ իրենց հերթին կատարում են խոստովանություններ: Հայտնաբերվում է կուսակցության զինանոցը եւ բռնագրավվում:

Ահարոնյանը հուշերի էջ 981-989-ում անդրադառնալով այս միջադեպին ու նրա հետեւանքներին՝ գրում է. «Այս միջադեպը իր բացասական դերը ունեցավ իրանահայության հանրային կյանքում... կտրուկ փոխվեց Իրանի իշխանավորների վերաբերմունքը իրանահայության նկատմամբ... մայիս 28-ին փակվեցին Թեհրանի առաջնորդարանի եւ Ս. Սարգիս եկեղեցու դռները... ոստիկանությունը արգելում էր ժողովրդի մուտքը այնտեղ... երկու ամիս փակված մնաց Արարատ մարզավանը եւ...»:

Սակայն ինչո՞ւ տեղի ունեցավ այս դեպքը: Ահարոնյանը բավարարվում է այս կարեւոր դեպքի մասին հաղորդել մի պարզ ամբոխային զրույց, իբր թե երիտասարդ դաշնակցականին հանձնարարել էին զինավարժությունից հետո օգտագործված զենքը վերադարձնի զինանոց... որը եւ ենթարկվում է վթարի եւ ձերբակալվում» (էջ 981): Չպարզելով, թե ո՞րն է այս հայտարարության լրատու աղբյուրը: Ինչո՞ւ էր կուտակվել այդքան մեծ քանակության զենք ու զինամթերք, որտե՞ղ, ո՞ւմ դեմ եւ ի՞նչ նպատակով պետք է օգտագործվեին դրանք:

Այս ձերբակալությունների մասին Իրանի ԻՀ տեղեկատվության եւ անվտանգության նախարարը՝ հոջաթոլիսլամ Ռեյշահրին 1986թ. օգոստոսի 26-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ, Դաշնակցություն կուսակցությանը դասելով Իրանի իշխանության հակադիր կազմակերպություններ եւ Լիբանանի Ֆալանժիստական կուսակցության շարքերին, նրան համարում է արեւմտամետ, փրոամերիկյա, կապված նախկին վարչակարգին, որը չմասնակցեց իսլամական հանրապետության հանրաքվեին եւ վերջերս կապեր էր հաստատել Իրաքի հետ, եւ ավելացնում է. «Հեզբոլլահի տիրապետությունից հետո Դաշնակցությունը տակտիկորեն փոխեց իր դիրքերը եւ առերես իրեն իսլամական հանրապետության կողմնակից էր ձեւացնում, եւ հավակնում էր որ Իրանում չունի կազմակերպություն եւ չի ծավալում որեւէ աշխատանք... սակայն վերջերս այս կուսակցությունը Սպահանում ծանր հարված ստացավ, ձերբակալվեցին այդ կազմակերպության պարագլուխներից 11 հոգի, որոնցից 6-ը՝ ռազմական բաժանմունքի անդամներ...: Ձերբակալվածների մոտ հայտնաբերվեց 70 միավոր «G-3ե եւ կալաշնիկով տեսակի հրազեններ,... 10,000 հատ տարբեր տեսակի փամփուշտներ ու... մեծ քանակությամբ ներկուսակցական փաստաթղթեր եւ այլն («Էթելաաթ» օրաթերթ, 27 օգոստոս 1986թ):

Ահարոնյանը գրքի էջ 838-ում գրում է . «Հայաստանը ձեռք էր բերել իր անկախությունը եւ ՀՅԴ-ն քաղաքական ասպարեզում գտել էր իր ուրույն եւ կարեւոր դերը նորանկախ Հայաստանի Հանրապետությունում: Իրանի հեղափոխական իշխանությունը եւս մի վստահելի կուսակցության կարիք ուներ, որ նրա միջոցով մոտ հարաբերություններ ստեղծեր Հայաստանի նորանկախ իշխանության հետ:

«Իրանի Ի. Հանրապետությունը երկար ուսումնասիրելուց հետո հասել էր այն եզրակացության, որ ՀՅԴ-ն հենց այն կուսակցությունն էր, որի միջոցով կարող էր հարաբերություններ ստեղծել այլ պետությունների հետ, եւ գտնել նոր բարեկամներ»: Իսկ էջ 1290-ում հեղինակը գրում է. «Անկասկած Իրանի իշխանությունը սկզբում Դաշնակցություն կուսակցությանը համարում էր ԱՄՆ-ի շահերի պաշտպան եւ նրա քաղաքականության իրականացնող: Փոխելու համար այս դիտանկյունը Դաշնակցության կուսակցության քաղաքական գրասենյակի անդամ Հրայր Մարուխյանը 1993 թ. ճամփորդեց Թեհրան եւ ամբողջ մեկ շաբաթ տեսակցեց Իրանի ազգային անվտանգության խորհրդի եւ արտգործնախարարության եւ այլ հիմնարկների ներկայացուցիչների հետ, որտեղ ստորագրվեցին երկկողմ համագործակցության շահավետ պայմանագրեր... Այս պայմանագրերի հիման վրա Իրանը իր նպատակներին հասնելու համար կարող էր օգտվել հայկական լոբբիներից աշխարհի տարբեր երկրներում...»:

## ՄԱՀԱՓՈՐՁԵՐ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրանի հեղափոխության հաղթանակից հետո Նոր Ջուղայում տեղի ունեցան բազում արյունալի եւ աղետալի միջադեպեր, որոնց մեծ մասը արտացոլվեցին նաեւ մամուլի էջերում, սակայն դրանց, դիտավորյա՞լ, թե՞ ակամա, չի անդրադարձել Ահարոնյանը:

1980-թ. հոկտեմբերի 1-ին իր սան ճեմում անհայտ անձերի անտորագիր համազարկերի զոհ դարձավ երիտասարդ հասարակական գործիչ, երկու մանուկների հայր, Նոր Ջուղայի ժողովրդական ժամանակավոր կոմիտեի (ԺԺԿ-ի) անդամ, ճարտարագետ Հրաչ Համբարչյանը:

1982թ. դեկտեմբերի 29-ին Նոր Ջուղայում մահափորձ կատարվեց հանրահայտ մտավորական, Սպահանի համալսարանի հայագիտական ամբիոնի դասախոս եւ ԻԱՄՄ-ի Նոր Ջուղայի մասնաճյուղի վարչության նախագահ Ազատ Մաթյանի վրա, սակայն բարեբախտաբար ոճրագործը վրիպեց, գնդակը ծակեց միայն մեքենայի ապակին, եւ այդպիսով Ազատ Մաթյանին որեւէ վնաս չհասավ: Ի հեճուկս դավադիրների՝ Ազատը ապրեց եւ տասնամյակներ շարունակ ստեղծագործեց ու ծառայեց հայ համայնքին, հայոց լեզվին ու գրականությանը:

Դարձյալ Նոր Ջուղայում 20 տեղից դաշունահարվեց ԺԺԿ-ին համակրող Սերոժ Հաթամյանը, որին արյունաքամ վիճակում փոխադրեցին հիվանդանոց, եւ հրաշքով փրկվեց մահից:

1986 թ. մայիսի 9-ին, ի հակազդեցություն ԻԱՄՄ-ի « Նոր Ջուղայի եւ Շահինշահրի Մեծ Եղեռնի 71-ամյակի հանձնախմբի» սարքած թռուցիկ հայտարարությանը, կես գիշերին հրի մատնվեց ԻԱՄՄ-ի Նոր Ջուղայի մասնաճյուղի կենտրոնատեղին:

1988 թ. Մայիսի 14-ին ԻԱՄՄ-ի Նոր Ջուղայի մասնաճյուղը հանդես եկավ մի հաղորդագրությամբ, որում բացահայտեցին ոճրագործներին:

*Շարունակելի*

ՀՐԱՉ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
Թեհրան

ԱԶԳ

ՄՇԱԿՈՒՅԹ

# «Եթե աշխարհը փակում է դռները Արցախի առջեւ, մենք բաց ենք բոլորի համար»

Երբ երկու տարի առաջ Արցախում մշակույթի նախարարությունն առանձնացվեց կրթության եւ գիտության նախարարությունից, նպատակը մեկն էր՝ զարգացնել մշակութային կյանքը: ԼՂՀ մշակույթի նախարար **Նարինե Աղաբալյանի** մեկնաբանությամբ՝ պատերազմից հետո առաջնահերթություն էին համարվում օրախնդիր հարցերը, ու հիմնական ֆինանսավորումն ուղղորդվում էր կենսապահովման հարցերին, մինչդեռ մշակույթն այն մեծ ուժն է, որով Արցախը կարողանում է ներկայանալ աշխարհին: Այսօր պետության վերաբերմունքը մշակույթի հանդեպ փոխվել է:

«Միշտ չէ, որ խնդիրները կարելի է լուծել դիվանագիտական երկխոսությամբ, դժվարությամբ սակայն այդ պատնեշը կարողանում ենք հաղթահարել մշակույթի շնորհիվ», **«Ազգի»** հետ զրույցում ասաց նախարարը՝ փաստելով, որ պատնեշի հաղթահարման լավագույն ապացույցը այս տարի Արցախում առաջին անգամ կազմակերպված դասական երաժշտության միջազգային փառատոնն էր՝ մասնակցությամբ 9 երկրի:

«Սա բացառիկ երեւույթ էր, որովհետեւ Արցախը չճանաչված պետություն է, եւ միջազգային մրցույթներին մասնակցելու համար մեր առջեւ բոլոր դռները փակ են: Մենք որոշեցինք՝ եթե աշխարհը փակում է դռները մեր առջեւ, մենք բաց ենք բոլորի համար»,

Նախարարը պատմում է, որ փառատոնի ընթացքում Ավստրիայից, Ռուսաստանից եւ Լիտվայից եկած մասնագետները վարպետության բաց դասեր են անցկացրել երիտասարդ կատարողների հետ: Արցախում վեցամյա կենսագրություն ունեցող կամերային նվագախմբի շնորհիվ էլ մեծանում է մի սերունդ, որը շատ տաղանդավոր է եւ կարող է պատշաճ ներկայանալ միջազգային բեմերում:

«Արցախում մշակույթի զարգացման եւ առաջխաղացման մեծ պոտենցիալ կա եւ անհրաժեշտ պայմանների ու աջակցության պարագայում արվեստի բնագավառում էլ հաղթանակ կգրանցվի»:

Մշակութային հաղթանակ գրանցելու սկիզբը դպրոցների բացումն է: Հանրապետության մեծ գյուղերում բացվել են արվեստի դպրոցներ, գրեթե բոլոր շրջկենտրոններում գործում են գրադարաններ, մշակույթի տներ ու համույթներ:

«Գյուղերում բազմաթիվ տաղանդավոր երեխաներ կան, որոնք կտրված են մշակութային կրթություն ստանալու հնարավորությունից: Գյուղերում դպրոցներ բացելով՝ փորձում ենք նրանց չհեռացնել իրենց բնակավայրից: Սա նաեւ ռազմավարական խնդիր է: Արցախն ուժեղ է իր գյուղերով, զինվորի հետ հավասար սահմանը գյուղացին է պահում: Դպրոցների բացումը ամրացնում է գյուղը, գյուղացին ստիպված չի լինի լքել իր բնակավայրը, որպեսզի երեխան լավ կրթություն ստանա»:

Նարինե Աղաբալյանի ներկայացմամբ՝ մշակութային ոլորտի ամենացավոտ խնդիրը թատրոնի վիճակն է: Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի շենքը մայրաքաղաքի լավագույն ճարտարապետական կառույցներից է:



Պատերազմից հետո շենքը հայտնվեց անմխիթար վիճակում. վերանորոգման համար հսկայական ներդրումներ են անհրաժեշտ, թատրոնի ստեղծագործական կազմն էլ հարկադիր պարապուրդի է մատնվել եւ կորցրել ստեղծագործական ուժը:

Հաջորդ երկու տարիները կարելի է անվանել թատերական՝ 2011-ին կլրանա Շուշիի Խանդամիրյանի անվան դրամատիկական թատրոնի 120-ամյակը, իսկ 2012-ին՝ Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի 80-ամյակը:

Այժմ նախարարությունը թատրոնի զարգացման հայեցակարգ է մշակում, որպեսզի արժանավայել նշեն հոբելյանները:

«Արցախում թատրոնը խոր արմատներ ունի, տասնամյակներ շարունակ այն պաշտամունքի առարկա էր, իսկ այսօր լիարժեքության համար ինչ-որ բան է պակասում: Առաջնահերթ խնդիրը թատրոնի շենքային պայմանների բարելավումն է եւ ստեղծագործական կազմի համալրումը»:

Բացի թատրոնից՝ նախարարության ուշադրության կենտրոնում է նաեւ ազգագրական արվեստը: Աղաբալյանի վստահեցմամբ՝ հայի ինքնությունն արտացոլվում է հենց ազգագրության միջոցով:

Մշակույթի նախարարը հավաստիացնում է, որ հասարակությունն էլ մշակույթի հանդեպ անտարբեր չէ եւ լավ համերգի կամ ներկայացման ժամանակ դահլիճը միշտ լիքն է:

«Արցախցի հանդիսատեսը ներքին հույզերն ու ապրումները դժվարությամբ է արտահայտում, արցախցին չի կարողանում կեղծել, ստել ու քաղաքավարության զոհ գնալով ծափահարել», ասում է նա:

Աղաբալյանի համոզմամբ՝ Արցախում ներկայանալը յուրատեսակ քննություն է արվեստագետի համար: «Ամիսներ առաջ Ստեփանակերտում էր աշխարհահռչակ ջութակահար Սերգեյ Խաչատրյանը: Ավելի քան 50 երկրում ելույթ ունեցած Խաչատրյանը համերգից հետո հայտարարեց, որ հազվադեպ է հանդիպում նման ընդունելության եւ ճիշտ ընկալող ու գնահատող հանդիսատեսի»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստեփանակերտ-Երեւան

ԱՄՆ

## Էջե Թեմելկուրանը բացահայտում է «Խոր լեռան» գաղտնիքները

Միչիգանի (Էն Արբոր) համալսարանի հայկական ուսումնասիրությունների ծրագրի աշնանային դասախոսությունների շրջանակներում իր նոր՝ «Խոր լեռը» գիրքն է ներկայացրել թուրք գրող Էջե Թեմելկուրանը:

«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ, Հրանտ Դինքի խորհրդով ժամանակին Հայաստան այցելելով եւ հանդիպելով Սիլվա Կապուտիկյանին, տիկին Թեմելկուրանը բանաստեղծուհուն հարցրել է, թե որն է Արարատով այդքանով տարված լինելու իմաստը հայերի համար, եւ ստացել հետեւյալ պատասխանը. «Արարատը, սիրելիս, լոկ բարձունք է ձեզ՝ թուրքերիդ համար, մինչդեռ մեզ՝ հայերիս համար նա խոր իմաստ է պարունակում»:

Այդ խոսքերից էլ ծնվել է նրա նոր գրքի վերնագիրը: Դրանում նա փորձել է նորովի բացատրել հայ-թուրքական հարաբերությունները: Հայաստանում գտնվելու օրերին նա այցելել է Եղեռնի հուշարձան եւ հանդիպումներ ունեցել բազմաթիվ հայերի հետ:

Մերձավորարեւելյան եւ հյուսիսաֆրիկյան ուսումնասիրությունների կենտրոնի հովանավորությամբ կազմակերպված դասախոսությունը, որն սկսվել է Հրանտ Դինքին նվիրված լուսանկարների ցուցադրումով եւ վերոնշյալ համալսարանի այցելու դասախոս Մուրատ Օզույֆսելի՝ Դինքին ձոնված երգով, մեծ հետաքրքրություն է առաջացրել ներկաների շրջանում: Հ. Ծ.

## «Հայկական խոհանոցի» երկրորդ հրատարակությունը

Սեպտեմբերին Ամերիկայում անգլերեն լեզվով հրատարակված «Հայկական խոհանոց: Պահպանելով մեր ժառանգությունը» գիրքն, ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի նոյեմբերի 6-ի տեղեկատվության, արդեն իսկ լույս է տեսել երկրորդ հրատարակությամբ: Հայկական խոհանոցը մեր ինքնության պահպանման անքակտելի մասն է եղել, եւ հայ կանայք մեծ դեր են խաղացել, պատասխանատվության բարձր զգացումներով, դրա շարունակական բնույթին սերնդից սերունդ փոխանցելով տարբեր ճաշատեսակների ու թխվածքների բաղադրատոմսերը: Դրանք հիմնականում պատմական Հայաստանի 6 գլխավոր նահանգներից են, եւ հնարավոր կորստից փրկելու նպատակով Սաութֆիլդի (Միչիգան) Սբ Հովհաննես հայկական եկեղեցու կանանց միությունը (գիլդիան), նախաձեռնությամբ Լինդա Թիֆանիի, Դոլլի Մասոյանի եւ Պամելա Դայինյանի, ի մի է հավաքել ավելի քան 450 հայկական բաղադրատոմսեր, մանրամասն ստուգել (նույնիսկ փորձել պատրաստել), ապա տեղադրել գրքի էջերում՝ որպես լավագույն նվեր 21-րդ դարի երիտասարդ սերնդին:

Գրքի մասին հավելյալ տեղեկությունների համար խորհուրդ է տրվում այցելել «stjohnarmenianchurch/publicationsandinfo» կամ «armenian-cuisinecookbook.html» կայքերը: Հ. Ծ.

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

## «Ինչ-որ բանը» չի հիշվելու

**Ստեփանակերտն, ուրեմն, միացավ Նիկոլ Փաշինյանի դատապաշտպանությանը: Լավ է: Մի քանի օր առաջ էլ արցախցի «էմո»-ներն էին զայրույթով բողոքել Երեւանի դպրոցներում «կատարվող անօրինականություններից»: Վաղը գուցե Եհովայի վկաները դուրս գան «համահայկական ցույցի»: Իսկ Գեորգի Վանյանը նախաձեռնի ադրբեջանական հայտնի «Արշին մալ ալան» օպերետի բեմադրությունը Թատերական հրապարակում: Իսկ որ Ադրբեջանում անունների «լուսանցորդ» են ստեղծել եւ կարմիր գույնի տակ ներառել բոլոր «անցանկալի անունները», դա Վանյանին չի հետաքրքրում: Ինքը դեմոկրատ է, ունի անհատականություն, սեփական կարծիք: Ուրիշները՝ ոչ: Նրանք ընդամենը «սպասարկում են իշխանություններին»:**

**Բոլորը, ովքեր կարծում են, որ Նիկոլ Փաշինյանի գործով որոշումները կարող են լինել միայն իրավական դաշտում, ովքեր գտնում են, որ մինչ մարտի 1-ն էլ կար «Հայկական ժամանակ» օրաթերթ, դարձյալ քննադատում էին իշխանություններին, բայց գլխավոր խմբագրի դեմ ոչ ոք քրեական գործ չէր հարուցում: Ինչո՞ւ: Քանի որ նա սահմանադրությամբ եւ օրենքներով ունեցած իրավունքների շրջանակներում ազատորեն, առանց ուրիշների կամքին բռնանալու, քարոզում էր իր համոզմունքները:**

**Բոլորը, ովքեր գտնում են, որ Գեորգի Վանյանը սխալվում է, երբ հավասարության նշան է դնում Սումգայիթի եւ Խոջալուի միջեւ, «սեփական տեսակետ չունեն»: Ավելին, Վանյանն արդեն աղաղակել է, որ իր «հանդեպ ֆիզիկական հաշվեհարդար է հասունանում»: Վաղը հարցազրույց կտա ադրբեջանական լրատվամիջոցներից մեկին եւ «կիհերոսանա»:**

**Իսկ հայաստանյան անկախ համարվող լրատվամիջոցներն օրնիբուն գրում են Կիեւյան կամրջից ցած նետված, ջրանցքում խեղդված, ինքնահրկիզման փորձ կատարած մարդկանց մասին: Զարմանալի է, թե ինչպե՞ս է գիշերվա ժամը 4-ին ֆոտոլրագրողը հայտնվում ջրաշխարհի մոտ եւ լուսանկարում վթարված ավտոմեքենան: Նախապես գիտե՞ր, որ վթար է լինելու ու չէր քնել, թե՞ ինչ-որ մեկը զանգել, նրան անկողնուց հանել է, որպեսզի ծեգը-ծեգին հասարակությունն իմանա, որ Գագիկ Ծառուկյանի թիկնապահներից մեկը պատահարի զոհ է դարձել:**

**Կարող են ասել, որ լրագրողն անում է իր գործը: Իհարկե, դեմ չեմ, դա նրա սեւ աշխատանքն է: Բայց, ամեն դեպքում, նման օպերատիվություն բոլոր լրագրողները չէ, որ ունեն: Իսկ այս աշխարհում «հենց այնպես» օպերատիվություն չկա: Հետեւաբար, ինչ-որ մեկը շահագրգռված է, որ մամուլում հնարավորինս շատ խոսվի արտակարգ պատահարների, վերահաս սպառնալիքների, «հայկական ռասիզմի» եւ նման ուրիշ թեմաներով: Բանակի խնդիրներն էլ՝ վերադիր:**

**Ցավն այն չէ, որ «ինչ-որ մեկը» կա: Ի վերջո, «անտառն առանց ճնագայլի» չի լինում: Վտանգավոր է, երբ հասարակությունը «ճնագայլի» մասին գիտի, տեսնում է նրան եւ լռում: Հապա ո՞ւր են հայոց ոսկեբերան հրապարակախոսները, գիտնականները, մշակույթի գործիչները: Ինչո՞ւ են լռում: Ինչի՞ են սպասում: Էլ ի՞նչ պիտի կատարվի, որպեսզի գրիչ վերցնեն եւ ասեն իրենց հեղինակավոր, ազդու «ոչ»-ը:**

**1921թ. փետրվարյան ապստամբության օրերին հիվանդ, պատերազմում զավակ կորցրած Թումանյանը Թիֆլիսից հասել էր Երեւան, որպեսզի դաշնակցական հայերին հաշտեցնի բոլշեւիկ հայերի հետ: Իր նման մեծավարի՝ Սիմոն Վրացյանին ասի. «Այ Սիմոն, էդպես, ախր, չի լինի»: Ո՞ւր է, որտե՞ղ է այսօրվա հրապարակի այդ իմաստունը, այդ «Թումանյանը», չգիտեմ՝ այդ «ով որը», որ պիտի Երեւանի կենտրոնում հայ մարդկանց մի խմբի հաշտեցնի 3 միլիոն հայ ժողովրդի հետ:**

**Տասնյակից ավելի հեռուստաընկերություններ են գործում, եւ բոլորով նույն լուրն են կրկնում, նույն «սերիալները»: Հարավամերիկյան «խլամ»-ից իբր թե հրաժարվել, հիմա էլ հայկականն են պտտում: Մեկը չկա՞, որ ասի. «Եղբայր, էդ «Բանակում» կոչվածն ի՞նչ նպատակով ես նկարել, ո՞ւմ համար»: Նայում ես, եւ տպավորությունն այն է, որ հայկական զինված ուժերում «համբարձումներ» ու «ջամշոյաններ» են միայն ծառայում: Խոսք չկա, «լավ հերթափոխ են պատրաստում»:**

**Բան չունեմ ասելու, գրականություն չեմ պահանջում մեցնել: Բայց ՀՌԱՀ, կարելի է համոզված լինել, մրցույթի հայտ ներկայացնելիս այդ նույն հեռուստատեսությունը հաստատ «ռազմահայրենասիրական դաստիարակության թեմայի» փաթեթ նույնպես ներկայացրել է: Եվ այսօր ՀՌԱՀ-ն իրավասու է նրանից պահանջել, որ եթերից անհապաղ հանի «Բանակում»-ը: Ինչպես եւ՝ «Սիրված երգեր»-ը, որ մակարդակն իջեցրել, հասցրել է նրան, որ «ռեստորանային» կատարողների է քարոզում:**

**Իսկ նրա՞նք, որ հայերեն խոսում են Շիլաչու լեզվով, նրա՞նք, որ «հարյուրին» ասում են «հայրուր»: Ի՞նչ ասեմ լրագրողին, որ «է» օժանդակի փոխարեն «ա» է ասում, «ասաց»-ի փոխարեն՝ «ասեց»: Եվ այդպես էլ տպագրվում է: Եվ դեռ բարձր, սուրբ բաներից է խոսում:**

**Հին, անցած ժամանակներում մի Թումանյան ենք ունեցել, որ «այս» չի գրել, այլ՝ «էս», ասել է՝ «աշխարք»: Եվ Վահան Տերյան մաքուր մտավորականը կրտսերի քնքշությամբ գրել է, թե՝ «ոչինչ, թող դա էլ լինի, Թումանյանն է»: Հիմա երեկվա «դեղնակտուցները» իրենց Թումանյա՞ն են երեւակայում: Հին, դաժան ժամանակներում մի սեւազգեստ Կոմիտաս ենք ունեցել, գնացել՝ Եվրոպա է զարմացրել: Հիմա ո՞ւմ ենք «Եվրոպա ուղարկում»: Օրերս մտերիմներից մեկը դառը կատակեց. «Մեր ջահելության օրերի «ռաբիսը» հիմա դասականի տեղ է անցնում»:**

**Արամայիս Սահակյանը վերջերս «Ծիծաղի տուն» էր հրավիրել Արտաշես Ավետյանին: Եվ մեծ հաճույք էր լսել նրա երգը: Մեծ հաճույք է կիրակի օրով ոչինչ չանել, բազմոցին պառկել եւ... Հրանտ Մաթեւոսյան կարդալ: Կրկին կարդալ: Վերստին կարդալ թե գեղարվեստական գործը, թե հոդվածները, թե հարցազրույցները: Ողջը, ինչը որ «կաթել» է նրա գրչածայրից: Քանի որ մեր գրականության ժամանակը Հրանտ Մաթեւոսյանի վրա կանգ է առել եւ դեռ չի «լարվում»:**

**Իսկ գրականությունն ավելին է, քան գրականությունը: Գոնե մեզ համար այդպես է: Ուրիշներինը՝ ուրիշներին, մեր ինքնագիտակցությունը մեծ մասամբ հենց գրական-մշակութային է: Մեզ դեռ առաջնորդում է հայոց պատմության առասպելը, որ, գուցե, իրականությանը նվազ առնչություն ունի, բայց եթե դրանից ուզում ենք ձերբազատվել, ապա առնվազն մի նոր «Հրանտ Մաթեւոսյան» պիտի ունենայինք, մի նոր «Եղիշե Չարենց», մի նոր «Կոմիտաս», մի նոր «Մարտիրոս Սարյան»: Թե չէ «Վերնիսաժ»-ից Բակուր Կարապետյանը դեռ շատ երկար է պաստեր փոխանցելու: Եվ համացանցում հայ գրականությունը ներկայացված է մնալու Վիոլետ Գրիգորյանով: Իրոք որ՝ «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ», կին արարա՞ծ էլ «գոտկատեղից ներքեւով պոեզիա» գրի:**

**Չգիտեմ, չգիտեմ, չգիտեմ: Այս երկրում կյանքը միշտ էլ դժվար է եղել՝ ե՛ւ թուրքուպարսիկի, ե՛ւ ռուսի, ե՛ւ խորհրդայինի օրոք: Համենայն դեպս, ավելի հեշտ չի եղել, քան այսօր է: Բայց այս երկիրը երբեք «ոգու սով» չի ապրել: Այս երկիրը եւ ժողովուրդն անգամ ակնհայտ պարտությունն է հաղթանակ տեսել: Վկան՝ Եղիշեի մատյանը: Վկան՝ ֆիդայական երգերը: Վկան՝ Թումանյանը, Տերյանը, Չարենցը, Մարտիրոս Սարյանը, ով, ինչպես Հրանտ Մաթեւոսյանն է միայն իր նման բանաձեւում, «ազգային մեծ ողբերգությունից ոչ մի գույն չունի»: Վկան՝ Ալեքսանդր Թամանյանը, որ երազում էր «արեւային քաղաք», ինչպես նրան Չարենցն է հասկացել:**

**Ինչ-որ բան կարծես այն չէ: Քանի որ մասնակին, եզակին, առանձնակին հավակնում են օրինաչափություն ներկայացնելու: Նիկոլի գործը: Կիեւյան կամրջից ցած նետվելը: Ջրաշխարհի մոտի վթարը: Բանակի դժբախտ պատահարները: Մյուսները՝ ապրուստի հոգսն էլ հետը: Երեկ, տառացիորեն երեկ այս ժողովուրդը միլիոններով մեռնում էր թուրքի յաթաղանից, սիրիական անապատների շոգից, տարափոխիկ հիվանդություններից, կատարյալ սովից, բայց վաղվա օրվան հավատում էր: Այլապես հրաշք չէր լինի:**

**Նույնն է ժողովուրդը: Նույնն է եւ հավատը: Եվ հրաշք լինելու է անպայման: Ծնվելու են վաղվա Թումանյանը, Կոմիտասը, Չարենցը, Մարտիրոս Սարյանը: Մյուսները: Եվ այսօրվա «ինչ-որ բանը» չի հիշվելու:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Մարզական

## Եվս երկու մեդալ հայ ծանրորդների հավաքածուում

Լիմասոլում ընթացող ծանրամարտի Եվրոպայի պատանեկան եւ երիտասարդական առաջնությունների հերթական օրը եւս հաջող էր հայ ծանրորդների համար, որոնք արժանացան մեդալների:

Մինչեւ 62 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացրեց Ռուբիկ Մամոյանը: Նա հանդես եկավ մինչեւ 23 տարեկանների մրցաշարում եւ երկամարտի 270 կգ (125+145) արդյունքով դարձավ Եվրոպայի փոխչեմպիոն: Պոկում վարժությունում Մամոյանի համար հաջողությամբ պսակվեցին առաջին երկու մոտեցումները, որոնց ժամանակ նա հաջորդաբար բարձրացրեց 119 եւ 125 կգ: Իսկ ահա 3-րդ մոտեցմամբ նրան չհաջողվեց գլխավերեւում պահել 127 կգ-անոց ծանրաձողը: Արդյունքում Ռուբիկ Մամոյանը պոկում վարժությունում արծաթե մեդալ նվաճեց: Նա 6 կգ-ով հետ մնաց լավագույն արդյունքի հասած թուրք Բունյամի Սեզերից: Բրոնզե մեդալը բաժին հասավ Թուրքիայի մեկ այլ ներկայացուցչի՝ Ուգուր Կակմազին՝ 124 կգ:

Հրում վարժությունում Մամոյանը բոլորից ծանր նախնական քաշ էր (145 կգ) պատվիրել եւ հաջողությամբ բարձրացրեց ծանրաձողը: Թուրք Սեզերը 2-րդ մոտեցմամբ բարձրացնելով 147 կգ, երկամարտի արդյունքը հասցրեց 278-ի, ինչը 8 կգ-ով գերազանցում էր Մամոյանի ցուցանիշը: Չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար հայ ծանրորդը պատվիրեց 153 կգ, քանի որ հավասար արդյունքի դեպքում ի հաշիվ անձնական ավելի թեթեւ քաշի, չեմպիոն կհռչակվեր: Սակայն ցավոք 2 մոտեցումների ժամանակ էլ Մամոյանին չհաջողվեց բարձրացնել 153 կգ-ը: Դա չհաջողվեց նաեւ Սեզերին 3-րդ փորձի ժամանակ, սակայն երկամարտի 278 կգ-ն էլ բավական էր չեմպիոն հռչակվելու համար: Ռուբեն Մամոյանը երկամարտի 270 կգ (125+145) արդյունքով դարձավ Եվրոպայի փոխչեմպիոն: Նույնպիսի արդյունքով բրոնզե մեդալը նվաճեց Կիպրոսի ներկայացուցիչ Դիմիտրիս Մինասիդիսը, որն անձնական քաշով ավելի ծանր էր Մամոյանից: Վերջինս հրում վարժությունում բրոնզե մեդալ նվաճեց:

Մինչեւ 62 կգ քաշայինների պատանիների մրցաշարի հաղթող ճանաչվեց թուրք Հուսիփ Ատակը՝ 286 կգ (125+161): 2-րդ տեղը 276 կգ (126+150) արդյունքով զբաղեցրեց ռուսաստանցի Ֆելիքս Խալիբեկովը: Բրոնզե պարգեւին արժանացավ թուրք Տունկեր Կոբանը՝ 261 կգ (116+145): Հունաստանի դրոշի ներքո հանդես եկած Արմեն Առաքելյանը երկամարտի 241 կգ (106+135) արդյունքով 10 ծանրորդների մրցավեճում 6-րդն էր:



*Ռուբեն Մամոյանը ելույթի պահին*

Մինչեւ 69 կգ քաշայինների մրցավեճում Հայաստանը 3 ներկայացուցիչ ուներ: Նրանցից Զորիկ Պողոսյանը հանդես եկավ մինչեւ 20 տարեկանների մրցաշարում, իսկ Վանիկ Ավետիսյանն ու Դավիթ Մուրադյանը մասնակցեցին մինչեւ 23 տարեկանների մրցավեճին: Այս եռյակից առավել հաջողը Վանիկ Ավետիսյանի ելույթն էր, որը երկամարտի 300 կգ (135+165) արդյունքով դարձավ բրոնզե մեդալակիր: Ընդ որում յուրաքանչյուր վարժությունում Վանիկը միայն մեկ հաջող փորձ կատարեց:

Պոկում վարժությունում Ավետիսյանը միայն 2-րդ փորձից «սանձեց» 135 կգ ծանրությունը, իսկ ահա 138 կգ-ը բարձրացնել չկարողացավ: Իհարկե, այս արդյունքը բավարար չէր պոկում վարժությունում մեդալ նվաճելու համար: Այստեղ ոսկե մեդալի արժանացավ ռուսաստանցի Օլեգ Չենը՝ 150 կգ: 2-րդ արդյունքը ցույց տվեց մոլդովացի Ալեքսանդրու Ստակը՝ 143 կգ, բրոնզե մեդալը բաժին հասավ բելառուսցի Անդրեյ Ասատրովին: Դավիթ Մուրադյանն էլ միայն 3-րդ մոտեցմամբ բարձրացնելով նախնական 135 կգ քաշը, մնաց առանց մեդալի:

Հրում վարժությունը Ավետիսյանը սկսեց 165 կգ-ից, սակայն հաջորդ 2 մոտեցումների ժամանակ չբարձրացրեց 170 կգ-ը: Դա բավարար էր այդ վարժությունում եւ երկամարտում բրոնզե մեդալներ նվաճելու համար: Դավիթ Մուրադյանն էլ միայն առաջին մոտեցումը հաջող կատարեց (160 կգ) եւ երկամարտի 295 կգ (135+160) արդյունքով 13 մասնակիցների մեջ գրավեց 4-րդ տեղը: Եթե նրան հաջողվեր բարձրացնել 166 կգ, ապա երկամարտում ցույց կտար 301 կգ արդյունք ու գերազանցելով Ավետիսյանին, կդառնար բրոնզե մեդալակիր:

Չեմպիոնի տիտղոսը երկամարտի 328 կգ (150+178) արդյունքով նվաճեց ռուսաստանցի Օլեգ Չենը: 2-րդ տեղը գրավեց մոլդովացի Ալեքսանդր Ստակը՝ 313 կգ (143+170):

Մինչեւ 20 տարեկանների մրցաշարում 20-ամյա Զորիկ Պողոսյանը երկամարտի 293 կգ (130+163) արդյունքով գրավեց 7-րդ տեղը 13 ծանրորդների մրցավեճում: Նա եւս մեկական հաջող մոտեցում կատարեց յուրաքանչյուր վարժությունում: Չեմպիոնի տիտղոսը նվաճեց ալբանացի Բրիկեն Կալջան՝ 310 կգ (140+170): Նույնպիսի արդյունքի հասավ նաեւ նրա հայրենակից Դանիել Գոդելին, որն ընդամենը 200 գրամով էր ծանր իր թիմակցից: Բրոնզե մեդալը բաժին հասավ մոլդովացի Սերգեյ Կեչիրին՝ 296 կգ (135+161):

## «Բրագան» խառնեց «Արսենալի» խաղաքարտերը



Կայացան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի 5-րդ տուրի առաջին 8 հանդիպումները, որոնց արդյունքներով «Մարսելը», «Չելսին» ու «Միլանը» ժամկետից շուտ 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճեցին: F խմբում հանդես եկող «Չելսին» սեփական հարկի տակ ի վերջո կարողացավ հաղթել «Ժիլինային» (2-1), որն առաջինն էր բացել հաշիվը: Անգլիական ակումբին հաղթանակ պարգեւեց խաղավարտից 4 րոպե առաջ Մալուդայի խփած գոլը: Նույն խմբից պայքարը կշարունակի նաեւ ֆրանսիական «Մարսելը», որը Մոսկվայում 3-0 հաշվով ջախջախեց «Սպարտակին»: Վերջինս իրավունք ստացավ գարնանը պայքարը շարունակելու Եվրոպայի լիգայի խաղարկությունում:

16 ուժեղագույն թիմերի շարքում իր տեղն ապահովեց նաեւ G խմբում հանդես եկող «Միլանը», որը հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթեց ֆրանսիական «Օսերին»: Թիմի հաղթանակն ապահովեցին Զլատան Իբրահիմովիչն ու Ռոնալդինյոն: Նույն խմբում ուղեգիրն արդեն ապահոված «Ռեալը» 4-0 հաշվով ջախջախեց «Այաքսին»:

Բավական խճճված իրավիճակ է ստեղծվել H խմբում: Մրցաշարի մեկնարկում Լոնդոնի «Արսենալը» 3 անընդմեջ հաղթանակ էր տոնել ու թվում էր, թե ուղեգիր նվաճելու հարցում բարդություններ չեն առաջանա: Սակայն հետեւեցին 2 անընդմեջ պարտությունները «Շախտյորից» եւ «Բրագայից» ու թիմը կորցրեց առաջատարի դիրքը: Պորտուգալիայում «Բրագային» հաղթանակ պարգեւեցին Մաթեուշի խփած 2 անպատասխան գոլերը: «Արսենալն» ունի 9 միավոր, որքան եւ «Բրագան»: Իսկ առաջատարի դերը 10 միավորով ստանձնեց Դոնեցկի «Շախտյորը», որը Բելգրադում 3 անպատասխան գնդակ խփեց «Պարտիզանի» դարպասը: Ավարտական տուրում, որը կկայանա դեկտեմբերի 8-ին, «Արսենալը» կհյուրընկալի «Պարտիզանին», իսկ «Շախտյորը» սեփական հարկի տակ կընդունի «Բրագային»:

E խմբում Մյունխենի «Բավարիան», որ նախորդ տուրում ապահովել էր 1/8 եզրափակիչի ուղեգիրը, Հռոմում 2-3 հաշվով պարտվեց տեղի «Ռոմային»: Վերջինիս հաղթանակն ապահովեց խաղավարտից 6 րոպե առաջ Ֆրանչեսկո Տոտիի իրացրած 11 մ հարվածը: Իսկ առաջին խաղակեսից հետո «Բավարիան» Գոմեսի խփած 2 գոլերի շնորհիվ շահում էր հանդիպումը:

Այս հաղթանակից հետո «Ռոման» 9 միավորով ընթանում է 2-րդ տեղում: 6 միավոր ունի «Բազելը», որը 1-0 հաշվով հաղթեց ռումինական ՉՖՌ-ին: Դեկտեմբերի 8-ին «Բազելը» հյուրընկալվելու է «Բավարիային», իսկ «Ռոման» մրցակցի դաշտում խաղալու է ՉՖՌ-ի հետ:

### ՇԱԽՄԱՏ

## Անդրեասյանի հաղթանակը ստիպել է վերանայել մրցակարգը

Այն բանից հետո, երբ Զավեն Անդրեասյանը վերջերս Բելգորոդում հաղթող ճանաչվեց Ռուսաստանի շախմատի գավաթի խաղարկությունում, այդ երկրի շախմատային ֆեդերացիան որոշել է քննարկել այլ պետությունների ներկայացուցիչներին այդ մրցաշարում հանդես գալու թույլտվության նպատակահարմարության հարցը: Ըստ գործող կարգի, Զավեն Անդրեասյանը որպես ՌԴ գավաթակիր, իրավունք է ձեռք բերել մասնակցելու հաջորդ տարվա խաղարկությանը: Սակայն բացառված չէ, որ նրան զրկեն այդ հնարավորությունից:

Զավեն Անդրեասյանը նշել է, որ ՌԴ գավաթի խաղարկություններում եւ երկրի առաջնությունում օտարերկրացի շախմատիստներին նախկինում էլ թույլատրում էին մասնակցելու: Սակայն իր հաղթանակը ստիպել է ֆեդերացիային վերանայելու գործող կարգը: Նա նաեւ անդրադարձել է գավաթի խաղարկությանը, նշելով, որ առանց հանգստյան օրերի շատ դժվար էր մրցաշարում խաղալը: Ըստ նրա, ավելի ճիշտ կլիներ, որ հավասար արդյունքի դեպքում շախմատիստները լրացուցիչ մրցախաղ անցկացնեին հաջորդ օրը:

## Հավակնորդների մրցաշարը կանցկացվի մայիսին

ՖԻԴԵ-ն վերջնականապես ճշտել է 2011-ին Կազանում նշանակված հավակնորդների մրցաշարի անցկացման ժամկետը: 8 ուժեղագույն գրոսմայստերների մասնակցությամբ մրցաշարը կմեկնարկի 2011-ի մայիսի 3-ին եւ կավարտվի նույն ամսվա 27-ին:

Թեեւ Մագնուս Կառլսենը հրաժարվել է հավակնորդների մրցաշարից ու նրա փոխարեն Կազանում հանդես գալու իրավունք է ստացել Ալեքսանդր Գրիշչուկը, սակայն ՖԻԴԵ-ն դեռեւս պաշտոնապես նորվեգացի գրոսմայստերին չի հանել մասնակիցների ցանկից: Ըստ գործող կարգի, մրցաշարի մասնակիցները պարտավոր են մինչեւ դեկտեմբերի 22-ը ՖԻԴԵ-ի քարտուղարություն հանձնել ստորագրված պայմանագրերը: Եթե մինչեւ այդ ժամկետը Մագնուս Կառլսենը պայմանագիրը չհանձնի քարտուղարություն, ապա նա պաշտոնապես դուրս կմնա մրցաշարից: Որպես պահեստայիններ նշված են ռուսաստանցիներ Ալեքսանդր Գրիշչուկը, Դմիտրի Յակովենկոն եւ չինացի Վան Յուեն:

## Արդշինինվեստբանկի հրաձիգները 3-րդն են

ՀՀ բանկի աշխատակցի օրվան նվիրված բանկային համակարգի հրաձգության մրցումներում Արդշինինվեստբանկի թիմը զբաղեցրել է 3-րդ տեղը: Թիմի կազմում էին բանկի անվտանգության դեպարտամենտի պահպանության եւ ռեժիմի բաժնի պետ Իգոր Վլասենկովը, ավագ տեսուչներ Կարեն Վարդանյանն ու Հայկ Բադալյանը:

Ըստ Արդշինինվեստբանկի վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանի, նմանատիպ միջբանկային մրցաշարերը ոչ միայն կոփում են աշխատակիցների առողջությունը, ֆիզիկական եւ տվյալ դեպքում՝ մասնագիտական պատրաստվածությունը, այլեւ ամրապնդում են արդար մրցակցության եւ հաղթանակի ոգին:

## Ֆեդերերն ապահովեց կիսաեզրափակիչի ուղեգիրը



Լոնդոնում շարունակվում է 8 ուժեղագույն թենիսիստների մրցավեճը: B խմբում կայացան 2-րդ տուրի հանդիպումները: Շվեդ Ռոբին Սոդերլինգը, որ առաջին խաղում պարտվել էր Էնդի Մարեյին, անդրանիկ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Դավիթ Ֆեռերի նկատմամբ (7-5, 7-5): Իր 2-րդ հաղթանակը տոնեց Ռոջեր Ֆեդերերը՝ պարտության մատնելով Էնդի Մարեյին (6-4, 6-2): Ֆեդերերը գործնականում ապահովեց տեղը կիսաեզրափակիչում: 3-րդ տուրում նա կմրցի Սոդերլինգի հետ, իսկ Մարեյի մրցակիցը կլինի Դավիթ Ֆեռերը: Սոդերլինգն ու Մարեյը վաստակել են մեկական միավոր, իսկ Ֆեռերը դեռեւս միավոր չունի:

## Յուրօրինակ ռեկորդ

Գերմանիայի հոկեյի էլիտար լիգայի «Շտրաուբինգ» եւ «Մյունխեն» թիմերի հանդիպման ժամանակ յուրօրինակ ռեկորդ է սահմանվել: Խաղի հիմնական եւ լրացուցիչ ժամանակը հաղթողին չի որոշել: Գրանցվել էր ոչ-ոքի՝ 4-4: Թիմերը ստիպված էին ուժերը չափել բուլիտներում: Եվ այստեղ յուրօրինակ ռեկորդ սահմանվեց: Հաղթողին որոշելու համար հարկ եղավ 42 բուլիտ իրացնել: Խաղը շահեց «Շտրաուբինգը»:

## Աֆելայը կտեղափոխվի «Բարսելոն»

«Բարսելոնը» հոլանդական «Էյնդհովենի» հետ համաձայնության է եկել Հոլանդիայի հավաքականի կիսապաշտպան Իբրահիմ Աֆելայի տեղափոխման հարցում: Վերջինս հունվարից հանդես կգա կատալոնական թիմում: «Բարսելոնը» նրա համար մոտ 3 մլն եվրո կվճարի: «Էյնդհովենի» կազմում Աֆելայը 8 մրցաշրջան է անցկացրել՝ 154 խաղում խփելով 34 գնդակ: 2007-ին նա ճանաչվել է Հոլանդիայի լավագույն երիտասարդ ֆուտբոլիստ: Երկրի ազգային հավաքականում նա արդեն 30 խաղ է անցկացրել, մասնակցել է 2008-ի Եվրոպայի եւ 2010-ի աշխարհի առաջնություններին:

## Թոմփսոնը ձգտում է չեմպիոնական հանդիպման

ԱՄՆ-ի Ատլանտիկ Սիթի քաղաքում ամերիկացի գերծանրքաշային բռնցքամարտիկ, 39-ամյա Տոնի Թոմփսոնը 4-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով հաղթել է իր 43-ամյա հայրենակից Պոլ Մարինաչիոյին:

Թոմփսոնը 2008-ին անհաջող փորձ էր կատարել նվաճելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ պարտվելով IBF-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կլիչկոյին: Ներկայումս ամերիկացի բռնցքամարտիկը եւ նրա պրոմոութերը փորձում են եւս մեկ անգամ չեմպիոնական մենամարտ անցկացնելու թույլտվություն ստանալ:

